Azg Ազգ

22 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ՈՒՐԲԱԹ 24(5107)

ISSN: 1829-1651

Ռաֆֆու արժեզրկումը կամ արժեվորումը կարող է տեղի ունենալ ժամ առ ժամ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ շրջանառվող տեսանյութում սպրդել էր մի մանրամասն նախագահ Սարգսյան-Ռաֆֆի Հովհաննիսյան հանդիպումից, որտեղ նախագահը ձեռֆսեղմումով ընդունելով Ռաֆֆուն՝ հարցնում է. «Մի տեսակ տխուր ես», իսկ Ռաֆֆին ժպտալով պատասխանում է՝ իրավատեր եմ: Ու մի ուրիշ մանրամասնի վրա տեսանյութը կտրվում է, երբ նախագահը հարցնում է՝ լրագրողների ներկայությամբ խոսեն, թե առանց նրանց, ու հետո լավ չի լսվում. ենթադրություն կար, որ Ռաֆֆին ասել է՝ առանց լրագրողների: Մեր կողմից նշենք, որ երբ նախագահ Սարգսյանի արարողակարգի ներկայացուցիչը եկավ նստավայրի մոտ՝ Ռաֆֆի Հովհաննիսյանին դիմավորելու, վերջինս ասաց, որ կուզենար բաց հանդիպում եւ իր կողմնակիցներից մեկ-երկուսի (օրերասոր, լրագրող) ներկայությամբ: Նրան պատասխանեցին, որ միայն Ռ. Հովհաննիսյանի հետ է հանդիպում նախանշված, եւ սա իմ ականջով եմ լսել: Տեսանյութում այլ բան էր սարքվել, փաստորեն, եւ դա բում էր առաջացրել սոցիալական ցանցերով: Բայց ավելի ուշ նախագահի մամուլի խոսնակ Արմեն Ազատանյանը մեկնաբանություն արեց, թե Ռ. Հովհաննիսյանը հրապարակային խոսքի կողմ է արտահայտվել հենց հանդիպման ընթացքում, եւ մամուլում տարածված կարծիքները չեն համապատասխանում իրականությանը: Այդ մեկնաբանության մեխը, սակայն, լրիվ ուրիշ բան է, որ կոչում է Ռաֆֆուն, թե՝ նախագահի հանդիպումների լուսաբանման ձեւաչափը մշտապես սահմանվում է կանխավ, այնպես որ երեկվա հանդիպման լուսաբանման ձեւաչափն էլ հանդիպումից առաջ քննարկվել եւ պայմանավորվածություն է ձեռքբերվել կողմերի միջեւ՝ լուսաբանման հաստատված արարողակարգով:

Տես էջ 2

Ռուսաստանը հստակեցնում է ղարաբաղյան կարգավորման բանակցությունների օրակարգը

Ադրբեջանական լրատվամիջոցները նկատելի լավատեսությամբ են խոսում ՌԴ արտաքին գործերի նոր հայեցակարգի մասին, որը ներառում է միջնորդություն Լեռնային Ղարաբաղի հարցում: Ըստ էության, սակայն, արտառոց ոչինչ չկա. Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական կայքը հրապարակել է փետրվարի 12-ին նախագահ Պուտինի հաստատած՝ «Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի հայեցակարգը» անվանումն ունեցող փաստաթուղթը:

Նրանում ներկայացված են ՌԴ արտաքին գործերի հիմնարար սկզբունքները, առաջնահերթ ուղղությունները: Փաստաթղթում, մասնավորապես, ասված է, որ Ռուսաստանը «կշարունակի գործուն դերակատարություն ունենալ ԱՊՀ տարածքի հակամարտությունների քաղաքական-դիվանագիտական կարգավորման մեջ»: Խոսքն ըստ էության վերաբերում է Մերձդնեստրին եւ Լեռնային Ղարաբաղին, քանի որ Ռուսաստանը, պաշտոնապես ճանաչելով Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը, համարում է, որ այդ խնդիրները կարգավորված են ընդմիշտ:

Ինչ վերաբերում է ԼՂ խնդրին, ապա Ռուսաստանը մտադիր է «նպաստել կարգավորմանը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս երկրների հետ համագործակցությամբ եւ այն հիմքով, որ շարադրված է Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների կողմից 2009-2011թ.թ. արված հայտարարություններով»:

Տես էջ 8

Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Մեր անդրադարձը Ֆրանսիայի հայկական թանգարանի ներկայիս անորոշ վիճակին. մանրամասները՝ արվեստաբան Էդդա Վարդանյանի հետ հարցազրույցում:

Բանասիրական դրդտումներ. Հովհ. Շիրազի «Անի» պոեմի եւ Պ. Պետրոսյանի «Էջեր հետախույզի կյանքից» վերջին հրատարակությունների հետքերով: Վարդան Մաթեոսյան. «Յովհաննէս Շիրազի «Անի» վիպերգը, Սիմոն Սիմոնեանի կրած պատիժը եւ Յուշագրութեան վտանգները»:

Ավիկ Իսահակյանի Պարույր Սեւակին նվիրված հուշագրության շարունակությունը:

Հայկ Դեմոյանի կազմած եւ խմբագրած «Հայկական ազգային խորհրդանշաններ. զինանշաններ, դրոշներ, պարգեւներ» աշխատության՝ Հարություն Մարությանի գրախոսականը:

Հատվածներ Աշոտ Պատմագրյանի «Իմ յուշերից» գրքից. տպավորություններ հայոց մեծերի հետ ունեցած հանդիպումներից՝ այցելություն Կոմիտասին Փարիզում:

Անդրադարձ Բեյրութից. Արմեն Յուրենչյանը՝ նախորդ համարում տպագրված Հակոբ Ավետիքյանի «Փառավորվեց հայ գիրը, բայց ոչ տպագրությունը» հոդվածի առիթով:

Մ. Ք.

Պատերազմի մութ կողմերը. Կոմանդոսն այսօր փաստաթղթեր կներկայացնի

«**Ազգ**» օրաթերթը երեկվա համարում հրապարակել էր Արցախյան ազատամարտի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր- Թադեւոսյանի հիշողությունները՝ կապված Արցախյան շարժման եւ ազատամարտի հետ: Կոմանդոսն ասել էր, որ առաջին նախագահ **Լեւոն Տեր-Պետրոսյանը** դեմ էր արցախյան գոյամարտի գործողությունների մեծ մասին, եւ այն ժամանակվա ղեկավարությունը փորձում էր հասնել խարխուլ խաղաղության՝ ձգտելով պահպանել Արցախն Ադրբեջանի կազմում:

«Եթե թույլ տային, խոջալուի ազատագրումն ավելի վաղ կսկսվեր: Լեւոն Տեր-Պետրոսյանը բանակցություններ էր վարում, որ Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում, սակայն Ղարաբաղի ղեկավարությունը դրան համաձայն չէր», հայտարարել էր Կոմանդոսը:

Երեկ այս հայտարարությանն անդրադարձել է «Ղարաբաղ» կոմիտեի նախկին անդամ **Աշոտ Մանուչարյանը**՝ պնդելով, որ ազատամարտիկին օգտագործում են քաղաքական ուժերը: «Առաջին անգամ չէ, որ Կոմանդոսին օգտագործում են: Մի քանի անգամ ես զգուշացրել եմ, բայց ցավալի է, որ այս անգամ եւս իրականացվել է քաղաքական գործողություն Արցախյան շարժման 25-ամյակի դեմ»: Մանուչարյանի գնահատմամբ՝ անհրաժեշտ է պարզել, թե ով է պատասխանատու հանրապետության դեմ այս քաղաքական գործողությունը, եւ ովքեր են պղծում մեր սրբությունները:

«Պատկերացրեք, որ եթե Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցներից մեկի նյարդերը չդիմանան, եւ իրականում պատասխանի, թե ինչ է եղել: Մի բան ակնհայտ է, Հայաստանը երբեւիցե որեւէ հեռագիր չի ուղարկել: Եթե դուք փորձեք բացել Ղարաբաղյան պատերազմի մասին եղած տեղեկությունները, դուք չեք գտնի Հայաստանից ուղարկված որեւէ հրահանգ, նյութ, որը վկայի, որ Հայաստանը միջամտել է Արցախյան պատերազմի գործողություններին, որովհետեւ Հայաստանի հայտարարությունն այն է, որ Արցախն ազատագրական պայքարն ինքնուրույն է անում, ոչ թե Հայաստանի օգնությամբ: Ադրբեջանի վարկածը եւ նրա հովանավորողներինն այն է, որ Հայաստանը ներխուժել է Արցախ եւ ռազմական գործողություններ սկսել՝ փորձելով զավթել ուրիշի տարածք»:

Մանուչարյանի խոսքերով՝ Տեր-Պետրոսյանը խուսափել է պատասխանել, որովհետեւ դա պետական գաղտնիք է:

Մանուչարյանը զգուշացնում է, որ քաղաքական ուժերը առեւտրական են, իսկ արտաքին ուժերը՝ սուր: Դրա համար լավագույն տարբերակն աչալրջությունն է: Նրա խոսքերով՝ Կոմանդոսին մեկ անգամ էլ փորձել են օգտագործել «Մեղրին հանձնելու տարբերակի» ժամանակ, ինչին երկրապահները դեմ են եղել, իսկ դրան ի հակադրություն ստեղծվել է ԱՎՄ-ն՝ Ազատամարտիկների վետերանների միությունը՝ Կոմանդոսի ղեկավարությամբ:

Կոմանդոսը երեկ հայտարարեց, որ այսօր կհրապարակի փաստաթղթեր, որոնք լույս կսփռեն գործին եւ կբացահայտեն ավելի քան քսանամյա պատմության մութ կողմերը:

Հ. Հ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2013 թ. փետրվարի 18-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած նախագահական ընտրություններում ձայների զգալի առավելությամբ հաղթանակ տոնեց գործող նախագահ Սերժ Սարգսյանը, ում թեկնածությունը պաշտպանել եւ սատարել էր նաեւ աշխարհասփյուռ Ռամկավար Ազատական կուսակցությունը:

ՌԱԿ-ը շնորհավորում է նորընտիր նախագահին եւ մաղթում նրան հետագա աշխատանքային նոր ձեռքբերումներ ու հաջողություններ: Ռամկավար Ազատական կուսակցությունը, հավատարիմ իր որդեգրած բացառապես հայրենանպաստ դիրքորոշմանը եւ իրատեսորեն գնահատելով միջազգային իրավիճակն ու մեր պետության շուրջն ստեղծված ներկա կացությունը, գտնում է, որ ժողովուրդն իր մեծամասնությամբ կատարել է ճիշտ ընտրություն եւ հետագա հինգ տարիների ընթացքում կլինի վերընտիր նախագահի կողքին, որպեսզի միասին հաղթահարենք ներքին ու արտաքին բազմաթիվ ու բազմապիսի խոչընդոտներն ու գնանք դեպի իրապես պատիվով պատգամ:

ՌԱԿ-ը, ուսումնասիրելով նախագահական ընտրությունների արդյունքների թվապատկերը, հանգել է եզրակացության, որ այն արտացոլում է երկրում ստեղծված ռեալ իրավիճակը, հասարակության տարբեր շերտերի դժգոհությունը, գերազանցապես համակարգային բնույթի թերությունները, որոնց հաղթահարման համար նորընտիր նախագահից կպահանջվեն ուժերի գերագույն լարում, հետեւողական ջանքեր եւ նորովի, իրատեսական մոտեցումներ առկա խնդիրների լուծման համար:

Ռամկավար Ազատական կուսակցությունը, որն իր ակտիվ գործունեությամբ թե՛ Սփյուռքում, եւ թե՛ Մայր հայրենիքում նույնպես նպաստեց գործող նախագահ Սերժ Սարգսյանի հաղթանակին, եւ այս օրերին ողջույնի բազմաթիվ նամակներ է ստանում կուսակցության տարբեր կառույցների, ինչպես նաեւ համակիր կազմակերպությունների ղեկավարներից, հաղթանակի կապակցությամբ ողջունում է Սերժ Սարգսյանին եւ հաջողություններ մաղթում:

Ռամկավար Ազատական կուսակցություն

ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ. Քվեարկությունը թեեւ հանգիստ էր, բայց...

«Միացյալ Նահանգները շնորհավորում է հայ ժողովրդին փետրվարի 18-ի ընտրությունների կապակցությամբ, որոնք միջազգային դիտորդների գնահատականներով ընդհանուր առմամբ լավ էին կազմակերպված եւ բնութագրվել են հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքով», փետրվարի 20-ին մամուլի հայտարարությամբ հանդես է եկել ԱՄՆ պետքարտուղարության մամուլի խոսնակ Վիկտորիա Նյուլանդը:

Նա նշել է նաեւ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի՝ հայաստանյան մամուլի առնչությամբ հնչեցրած որակումն առ այն, որ մամուլը կատարել է իր պարտականությունը՝ պատիվով ելնելով հավասարակշռված լուսաբանում, ընդ որում՝ ազատ եթերի օգտագործմամբ:

«Այդուհանդերձ, մենք համամիտ ենք ԵԱՀԿ ԺՀՄԻԳ արտահայտած մտահոգություններին հանրային կառավարման առումով անկողմնակալության պակասի եւ վարչական ռեսուրսների չարաշահման առնչությամբ, ինչը հանգեցրել է պետության ու իշխող կուսակցության գործողությունների տարանջատման լղոզմանը՝ ինչպես նախընտրական շրջանում, այնպես էլ քվեարկության օրը», նշել է Նյուլանդը:

Այս համատեքստում էլ ԱՄՆ պետքարտուղարության ներկայացուցիչն ընդգծել է, որ ԱՄՆ-ը համաձայն է այն բացահայտումներին, ըստ որոնց քվեարկության օրը թեեւ անցել է հանգիստ ու նորմալ, սակայն դիտարկվել են վստահված անձանց կողմից լիազորությունների չարաշահման, նաեւ լուրջ այլ խախտումներ՝ ընդհուպ ընտրողների վրա ճնշումներ:

«Միացյալ Նահանգները շարունակելու է դիտարկել միջազգային եւ տեղական դիտորդների բացահայտումները, ինչպես նաեւ ընտրական բողոքների քննությունները արդեն հետընտրական շրջանում: Իրավապահ մարմիններին մենք կոչ ենք անում հետաքննել եւ համապատասխան քայլեր ձեռնարկել ընտրախախտումների մասին հավաստի տեղեկություններին ի պատասխան: Մենք նաեւ բոլոր կողմերին կոչ ենք անում հանգստություն պահպանել հետընտրական շրջանում եւ զսպվածություն դրսեւորել իրենց հետագա գործողություններում», ասվում է Նյուլանդի մամուլի հաղորդագրության մեջ:

Վ. Պ.

ԱԶԳ

Ընթացիկ

Ռաֆֆու արժեզրկումը կամ արժեվորումը կարող է տեղի ունենալ ժամ առ ժամ

1-ին էջից

Մինչդեռ Ազատության հրապարակում ժողովրդին այնպես թվաց, թե Ռաֆֆին հենց այդտեղ որոշում կայացրեց, քանի որ նախագահ Սարգսյանը չեկավ հրապարակ: Երեկ հենց այդպես բացատրեց Ռ. Հովհաննիսյանն իր կողմնակիցներին ժամը 13-ի սահմաններում, երբ ոստիկանությունը նրան չթույլատրեց նախօրոք ծրագրված հանդիպումն անցկացնել, ինքն էլ 5 րոպե խոսեց ու ասաց, թե քանի որ Սերժ Սարգսյանը չի եկել հրապարակ, ինքն է գնում նրան հանդիպելու: Այս բոլորը պետք է բաց ասել սեփական կողմնակիցներին, այլապես տարընթերցումների դուռ է բացվում:

Ի դեպ, երեկ օրվա վերջին կրկին գնալով Ազատության հրապարակ՝ Ռ. Հովհաննիսյանը նշեց, թե այդ հանդիպումը տեղի է ունեցել Հրանտ Բագրատյանի հորդորով եւ նախագահ Սարգսյանի հրավերով, բայց մանրամասները, ինչպես որ նախագահի նստավայրից դուրս գալուց հետո էր ասել, այսօր ժամը 17-ին կասի: Ու նաեւ ավելացրեց, թե ինքը զանգել է նախագահի խոսնակին ու արված ցանցային ֆոկուսը խնդրել ուղղել, քանի որ ինքն ի սկզբանե բաց հանդիպման կողմնակից է եղել:

Ինչ վերաբերում է նրան, որ տարբեր մակարդակներով հիմա հստակ միտում կա Ռ. Հովհաննիսյանի պահվածքին իրավիճակին ոչ համարժեք շեշտեր անելու, նշենք, որ դա շատ լավ պետք է պատկերացնի հենց ինքը, 37 տոկոս հավաքած լիդերը, եւ անի հավասարակշռված քայլեր, որոնք միանշանակ եզրակացություններ տեղիք կտան ոչ միայն իր համակիրների, այլեւ մյուս բոլորի մեջ: Երբ դու ասում ես, որ Սերժ Սարգսյանը պետք է գա հրապարակ եւ հանձնի իշխանությունը (դեռեւս գործող նախագա՞հը), դա լուրջ չէ, հատկապես եթե հաջորդ օրն ասում ես՝ ինքը չեկավ, ուրեմն ես պետք է գնամ նստավայր:

Երբ երեկ Ազատության հրապարակում Երեւանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանն ասում էր, թե հանրահավաքն արտոնված չէ, եւ Ռաֆֆին օրենք է խախտում, Ռ. Հովհաննիսյանն, իսկապես, իրավական բացատրություն չէր տալիս, այլ ասում էր, որ ամեն ինչ է այս երկրում օրենքով, վերջն էլ ասաց, թե 5 րոպե ընդամենը կխոսի, թող դա վարչական խախտում համարեն իր կողմից:

Ինչեւէ, չմանրամանք: Այսպիսով՝ երեկ Ռաֆֆի Հովհաննիսյանը գնաց նախագահի նստավայր, մեկուկես ժամ հանդիպեց նախագահ Սարգսյանի հետ, դուրս եկավ ու բան չասաց իրեն սպասող ժողովրդին. «Հիմա գնում ենք մեր գործին, բոլոր հարցերին կպատասխանեմ վաղը», նշելով, որ վաղը հայ ժողովուրդը հաղթանակ է տոնելու, իսկ ինքը գնում էր դիվանագիտական հանդիպումների: Էլի ենթադրությունների դուռը բաց է՝ միգուցե ասելիքը չգիտի, ու գնում է, որ ասեն:

Իսկ նախագահի մամլո գրասենյակի հաղորդագրության մեջ երեկ այդ հանդիպման մասին ասված էր, որ քննարկել են նախագահական ընտրություններին եւ հետընտրական շրջանին վերաբերող հարցերի լայն շրջանակ, կարեւորել են բոլոր գործընթացները Սահմանադրության եւ օրենքների շրջանակներում իրականացնելու առաջնահերթությունը:

«Մոդեռն Ռաֆֆիից վաս իմաստով ավանդական պարտված ընդդիմադիր թեկնածու» (Արմեն Աշոտյանի բնորոշմամբ) ստանալ կուզենար ոչ միայն ՀՀԿ-ն , այլեւ բոլոր այն ուժերը, ում էլեկտորատից բաժին է ընկել Ռաֆֆուն:

Սա հաշվի առնելով՝ 37 տոկոս ստացած թեկնածուն պետք է մտածի ուրիշի ձայներն ըստ նշանակության տնօրինելու մասին, մանավանդ գաղտնիք չէ, որ արեւմտամետ թեկնածուին ձայներ է տվել ամենեւին ոչ Արեւմուտքը գլխին դնող զանգվածը:

Ռաֆֆին ինքն էլ երեւի չգիտի անելիքը

Ի՞նչ պետք է անի սթափ գործիչը. եթե անգամ ենթադրենք, որ գործող նախագահի օգտին կեղծվել է, ասենք, 100 հազար ձայն, ու 2 առավել ձայն ստացած թեկնածուների տոկոսները կարող էին պարզապես մոտենալ: Մեր կարծիքով՝ ստեղծված քաղաքական նոր քարտեզի պարագայում իրատեսականն ու օպտիմալը կլինի այն, ինչ գուցե մասամբ արդեն եղել է երեկվա հանդիպմամբ (չգիտենք, այսօր կիմանանք): Որ երկու թեկածուները նստեն ու քննարկեն քաղաքական պատկերին համարժեք ելքերի որոնումը, քանի որ հանրահավաքային պրակտիկան երբեք սովորաբար լավ բանի չի կարող բերել երկրին՝ միգուցե թշնամի ու բարեկամ շատ շրջանակներ ու հարեւաններ Հայաստանում ներքաղաքական լարում են երազում: Եթե ժողովուրդը Ռաֆֆու կարգախոսներին գոռում է՝ այո՞, սա դեռ չի նշանակում, որ քաղաքական սթափ գործիչը այդ «այո»-ի տակտով պետք է որոշում կայացնի:

Ելքի որոնման խոսակցությունը (քանի որ 500 հազար դժգոհ քաղաքացիների ձայնն իսկապես հնարավոր չէ անտեսել) կարող է գնալ մի շարք հնարավորությունների շուրջը՝ ապագա կառավարությունում զգալի դերակատարման ստանձնման, Ազգային ժողովի նոր ընտրությունների հնարավորության:

Այս երկու թեմայով երկխոսությունից դուրս Ռ. Հովհաննիսյանը պետք է փորձի մյուս ընդդիմադիր միավորների հետ բանակցելով ինչ-որ միասնական ֆորմատ ձեւավորել, եթե չի ուզում նախագահ Սարգսյանի հետ վերը նշված հնարավորությունների շուրջը բանակցել: Երբ նա կարողանա միասնական ճակատ ձեւավորել, ուրեմն եւ իրավունք կստանա տնօրինելու այն 37 տոկոսը, որը ստանալը ստացել է, բայց, վերջին օրերի նրա պահվածքը վկա, տնօրինելու ձեւը չգիտի: Երեկ նախագահի թեկնածուներից Հրանտ Բագրատյանը եւս այս կարգի կոչ էր ուղղել Ռաֆֆի Հովհաննիսյանին եւ Սերժ Սարգսյանին երկխոսելու՝ այդպիսի ցանկություն նկատելով նրանց մեջ, այլապես հետագա էսկալացիայից եւ բախումներից խուսափելն անհնար կլինի: Ուրիշ բան, որ միգուցե մեր ընդդիմադիր քաղաքական շրջանակները չեն ցանկանա իրենց ձայների հաշվին իրեն ընդդիմադիր լիդեր համարող Ռաֆֆի Հովհաննիսյանի լիդերությունը լեգիտիմացնել: Սա երեւում է ՀԱԿ-ամետ գործիչների առաջին գնահատականներից (օրինակ՝ Լյուդմիլա Սարգսյանն ասում է, թե իր համար ինտրիգն ավարտվեց, երբ Ռաֆֆին իր ոտքով գնաց նախագահի նստավայր):

Դե իսկ Ռաֆֆու հանրահավաքներին երեւացած ընդդիմադիր գործիչների մեծ մասը մայր կուսակցություններին հակադրված ու նրանցից հեռացած կամ հեռացող մարդիկ են, որոնք բուն ընդդիմադիր արիալը չեն ընդգրկում: Ու նրանցից Նիկոլ Փաշինյանն, օրինակ, նույնպես կոչ էր անում միավորվելու: Իսկ ընդհանրապես՝ շատերն են խոսում այն մասին, որ եթե տեսնեն՝ լուրջ պայքար է գնալու, Ռաֆֆից լուրջ լիդեր դուրս գա, կմիանան, այսինքն՝ սպասողական վիճակում են: Այս իմաստով Ռաֆֆու արժեզրկումը կամ, ընդհակառակը, արժեւորումը կարող է տեղի ունենալ ժամ առ ժամ: Ու դա նրանից է կախված:

Հ. Գ. - Ի դեպ, երեկ Ռաֆֆի Հովհաննիսյանը հանդիպել է նաեւ ՀՅԴ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուսամյանի եւ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի հետ: Վերջինս ողջունել է Ռ. Հովհաննիսյան-նախագահ Ս. Սարգսյան հանդիպման փաստը: Իսկ ժառանգականները երեկ մեզ հետ զրույցում նշում էին, թե ընդդիմադիր քաղաքական այլ ուժերի հետ եւս բանակցություններ կան:

ՀԱՄԱՌՈՏ

Ծաղկեպսակներ՝ ի հիշատակ Ղարաբաղյան շարժման զոհերի

Փետրվարի 21-ին Մոսկվայում, Մայր տաճարի տարածքում ի պատիվ ԼՂՀ անկախության շարժման 25-ամյակի եւ հանուն Արցախի ազատության թուրք-ադրբեջանական հրոսակների դեմ մղված պայքարի զոհերի հիշատակին նվիրված ծաղկեպսակներ են դրվել խաչքարի մոտ: Ռուսաստանի հայերի միությունից տեղեկացնում են, որ արարողությանը մասնակցել են եկեղեցու, ՌԴ-ում ՀՀ դեսպանության, ԼՂՀ, ՌՀՄ, ռուսաստանյան հասարակայնության եւ երիտասարդական միավորումների ներկայացուցիչներ:

Բեռլինում հիշատակելու են Սումգայիթում զոհվածներին

«Զոհերը զգուշացնում են՝ այլեւս երբեք չպետք է կատարվի», այս վերտառությամբ են 1988-ի փետրվարի 27-29-ին Սումգայիթում,1990-ի հունվարի 13-19-ին Բաքվում ու այլ քաղաքներում Ադրբեջանի կազմակերպած ոճրագործությանը զոհ գնացած հայերին հիշատակելու փետրվարի 24-ին ԳԴՀ մայրաքաղաքում: Ժամը 12.30- 13.30-ին Բրանդենբուրգյան դարպասների առջեւ հսկում է անցկացվելու, այնուհետեւ՝ ժամը 14.40-ին հուշահանդես եւ պատարագ է մատուցվելու Շառլոթենբուրգ թաղամասի ավետարանական Լուիզենֆիրշեում:Գերմանահայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանի աղոթքից հետո ելույթ կունենան Բեռլինում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանը, ԼՂՀ ներկայացուցիչ Հարություն Գրիգորյանը, Ճանաչման աշխատանքային խմբի նախագահ դոկտոր Թեսա Հոֆմանը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Ռուսաստանը հստակեցնում է ղարաբաղյան կարգավորման բանակցությունների օրակարգը

1-ին էջից

Սույն ձեւակերպումը թույլ է տալիս ենթադրել, որ Ռուսաստանը ԼՂ կարգավորման հարցում չի ցուցաբերի առանձին միջնորդական ջանքեր: Այսինքն, նախագահ Պուտինը չի փորձի կազմակերպել եռակողմ՝ Ռուսաստան-Հայաստան-Ադրբեջան բարձր մակարդակի նոր հանդիպումներ: Բայց «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ մյուս պետությունների հետ համագործակցությամբ» միջնորդություն իրականացնելու մասին ասվածը միաժամանակ կարելի է հասկանալ այնպես, որ Ռուսաստանը կանխորոշում է, որ Միացյալ Նահանգները կամ Ֆրանսիան նույնպես չեն կարող «միանձնյա մոդերատորի» դերակատարություն ստանձնել:

Պարզ ասած, Ռուսաստանը ԼՂ հարցի քաղաքական-դիվանագիտական կարգավորման գործում միջնորդությունը վերապահում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների համագործակցությանը: Եվ միաժամանակ էլ նշվում է միջնորդության, եթե կարելի է ասել, իրավաքաղաքական հիմքը՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների կողմից 2009-2011թ.թ. արված հայտարարությունները: Ինչպես հայտնի է, դրանցից վերջինն արվել է Մեդվեդեւ-Սարգսյան-Ալիեւ՝ Կազանի հանդիպման նախօրյակին: Հայտնի է նաեւ, որ այդ գագաթաժողովում Իլհամ Ալիեւը, ինչպես դիվանագետներից մեկն է ձեւակերպել, «հետընթաց է տվել»: Այսինքն, հրաժարվել է նախկին պայմանավորվածություններից:

Վերջերս «Ազերթաջ»՝ Ադրբեջանի պետական գործակալության մեկնաբանը, հղելով «դիվանագիտական աղբյուրների», ասել էր, որ «Ադրբեջանը չէր կարող ընդունել Կազանի փաստաթուղթը, քանի որ այնտեղ ԼՂ կարգավիճակի հարցով քվեարկություն նախատեսված էր անցկացնել ավելի վաղ, քան ԼՂ կվերադառնային ադրբեջանցիները»: Այդպես է, թե ոչ՝ վստահաբար հերքել կամ հաստատել չենք կարող:

Իրականն այն է, որ Ռուսաստանի ԱԳՆ որոշակիորեն հստակեցրել է ԼՂ կարգավորման բանակցությունների «օրակարգը» գոնե տեսանելի ապագայի կտրվածքով: Այն է՝ նոր առաջարկություններ, որոնք կարող են հակասել ՌԴ-ի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների հայտնի հայտարարություններին, չեն արվի, համանախագահող երկրներից որեւէ մեկը «մասնավոր միջնորդական առաքելություն» չի իրականացնի:

Այդ դեպքում ինչի՞ վրա կկենտրոնանան միջնորդները: Ի՞նչ իմաստ ունի համանախագահների կողմից Ադրբեջանի եւ Հայաստանի ԱԳ նախարարների հետ եւս մեկ անգամ Փարիզում հանդիպելու նախաձեռնությունը: Ըստ երեւույթին, «ամեն նոր լավ մոռացված հինն է» նաեւ դիվանագիտության ասպարեզում: Եվ միջնորդները կշարունակեն պնդել, որ կողմերը իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթուղթ ստորագրեն խնդիրները բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու պարտավորության մասին: Սպասենք պաշտոնական Բաքվի արձագանքին:

Վ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Մեկնաբան

Ռաֆֆին հուշում է

Խնդրահարույց իրավիճակներն ու ժամանակները հրամայական պահանջ են առաջադրում դրանց հանգուցալուծման գործընթացներում անդրադառնալու մեր մեծերի խոսքին ու փորձին, նրանց դիտարկումներին ու եզրահանգումներին: Տողերիս հեղինակը հենց այս նկատառումով ձեռքը վերցրեց մեծ վիպասանի հրաշարակախոսական գործունեությունն ընդգրկող հատորներից մեկն ու փորձեց ինչ-որ բան հստակեցնել իր համար, որն ավելորդ չի համարում ներկայացնել նաեւ հանրությանը:

Ուղիղ 135 տարի առաջ է ապրած ժամանակը բծախնդորեն ուսումնասիրած ու ճնած 45-ամյա գրողը թղթին հանձնել իր «Ինքնախաբեություն» մտորումները, ուր արտահայտված մտքերն առօրեականից առավել հրատապ են նաեւ մեր օրերում: Ինչ էր ասում հեղինակը. «**Ինքնախաբեությո՞ւն... դա մի շատ հասարակ բառ է, բայց նրա մեջ թաքնված են մարդու բոլոր թշվառությունները: Տեսնում ես՝ մեկը հիմար է, բայց կարծում է, թե խելք ունի: Մյուսը երկչոտ է, կարծում է, թե առյուծի սիրտ ունի: Երրորդը ոչինչ չի սովորել, բայց իրեն առաքելության տիպար է համարում: Այս բոլորը առաջ է գալիս ինքնախաբեությունից»:**

Մերօրյա ծանոթ իրողություններ են, որոնց որեւէ բան ավելացնելը կամ պակասեցնելն անիմաստ է: Երբեմն թվում է՝ զավեշտի թեմայով ներկայացում ենք դիտում կամ դրա մասնակիցներն ենք, անգամ հեղինակներն ու պատվիրատուները: Եվ հարցը՝ թե ո՞ւր ենք գնում, ի՞նչ անելու թե չանելու, ո՞վ է իրադարձությունների տերն ու պատասխանատուն, հնչում է ինքնաբերաբար: Մեծ վիպասանը տվել է իր մեկնաբանությունը: «**Ինքնախաբեությունը մեզանում ծնեց մի տեսակ «ազգասերներ»: Այս տեսակ «ազգասերները» մի կատարելագործված տիպ են ներկայացնում մեր հասարակության մեջ, որոնք, կարծես, պատկանում են մի առանձին «շկոլայի», որի հիմնադիրը հայտնի չէ: Այս տեսակ «ազգասերներին» ծանոթ չէ գործը»: Նրանց խոսքերի մեջ իմաստ չկա, բայց միեւնույն ժամանակ բազմիմաստ են, որպես մարգարեի խոսքեր, որ միշտ մեկնության կարոտ է»:**

Մի քանի տարի առաջ ինչպիսի դիպուկությամբ է բնորոշել մեր այսօրը, երբ հայ հանրությունն այսպես էլ չի ընմբռնում մերօրյա պատվիրակների ասածն ու արածը, չասվածն ու չարվածը: Գերտնտեսվարում ու գերհանրայնացում, մարդու մեր տեսակին գերանհրաժեշտ գերկողմնորոշումներ ու գերիրողություն ու գերբարեխղճություն: Երկիր մոլորակի վրա միայն մենք ենք ու միայն մեր տեսակը, մեզ հատուկ ցանկություններով ու պահանջներով, սպասումներով ու ակնկալիքներով: Բայց ցանկալիի ոլորտից իրականություն տեղափոխվենք՝ շարունակելով ընթերցել «Ինքնախաբեություն»-ը:

«Նրանք («ազգասերները») չեն սիրում ազգային գործերի մեջ մտնել, որովհետեւ երեւակայում են, որ իրենք մի «մեծ» բան պիտի անեն, որի ժամանակը չէ հասել... եւ միշտ իրենց աչքի առջեւ արգելքներ են տեսնում: Այլեւ արհամարհում են այժմյան գործիչների գործը, համարելով երեխայական խաղ: Լուռ ժպիտը նրանց երեսից պակաս չէ, երբ լսում են որեւիցե դատողություն մի նորելուկից...

Բայց կա եւ երկրորդ տեսակը, որն առաջինի կեղծ պատճենն է: Դրանք խարդախ մարդիկ են, որ ազգասիրական դիմակի ներքո թաքցնում են շահեկան նպատակները: Այդպիսիները խառնվում են գործի մեջ: Նրանք լինում են դպրոցների հոգաբարձուներ... բարեգործական նպատակներով նվիրված գումարների կտակատարներ... աղքատ դերասանների պատշգամբներ եւ երբեմն լրագիրների եւ ամսագիրների խմբագիրներ: Այս տեսակ «ազգասերների» թվում են եւ այն բարերարները, որոնք միշտ կողոպտել են, հափշտակել են եւ հազարումեկ կերպ ավազակությամբ հարստություն են դիզել. եւ վերջ ի վերջո ցանկանում են լավ մարդ ձեւանալ եւ իրենց կեղտոտ անցյալը ծածկել ազգասիրական քողով»:

Ի՞նչ է սա. պայծառատեսության յուրօրինակ դրսեւորո՞ւմ, թե՞ իրավիճակների առողջ գնահատական, որի համար հարկ է երախտիքի տրամադրություն ցուցաբերել: Այսպիսի ճշգրտությամբ ու դիպուկությամբ ուրվագծել ֆեոդալիզմից կապիտալիզմ, այնուհետեւ համայնավարությունից մինչեւ ազատական ժամանակներ տեղափոխված եւ գրեթե անփոփոխ մնացած հանրությունը, հիրավի ցնցող է: Թե՞ երբ է պարզունակ այս վիճակը, ինքնախաբկանքը, առավել պարզ իրատեսությամբ փոխարինվելու, մնում է անհայտ: Փորձենք դարձյալ ապավինել մեր Մեծին. «Պետք է լայն հայացքով նայել առարկայի վրա. պատմությունը առաչք միրաժներ ունի, որոնք երբեմն ձգում են անհմուտ նայողին օպտիկական խաբեությունների մեջ»:

Առավել դիպուկ դժվար է գնահատել, թեեւ վստահ եմ, որ մեր օրերում այն «եթե»-ներով ու «այսուհանդերձ»-ներով շարունակողներ սպասվածից շատ կհայտնվեն: Միայն թե 135 տարի անց կգտնվի՞ արդյոք մեկը, ով կհիշի նրանց եւ կփորձի արված հիմնավորումներում իրավիճակային լուծումների հատիկներ գտնել: Թե՞ սխիզված կամ պարտադրված կլինի հերթական անգամ անդրադառնալ մեր մեծերին, նրանց թողած ժառանգությունը:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ
Երեւան

ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Քաց նամակ Երեւանի քաղաքապետ պարոն Տարոն Մարգարյանին

Հարգարժան պարոն քաղաքապետ.

Ձեզ ենք դիմում Սուրենյան փողոցի եւ Ազատության պողոտայի N 12 շենքերի բազմահազար բնակիչների անունից, որոնք արդեն մեկ տարի պայքարում են իրենց բնակելի շենքերին կից գտնվող միակ կանաչ փոքր տարածքի՝ «Հ. Պարոնյան» կոչվող պուրակի պահպանման համար, որը բնակիչների եւ երեխաների ժամանցի, մաքուր օդ շնչելու միակ վայրն է:

Իսկ պարզվում է, որ «Մեծ մահակ» կոչվող ՍՊԸ-ն ստացել է այս տարածքում շենք կառուցելու թույլտվություն: Այդ ՍՊԸ-ի ներկայացուցիչները արդեն հաստատել են մի քանի ծառ արմատախիլ անել, փչացնել ջրի սնուցման նախկինում եղած խողովակները: Մնացած տասից ավելի ծառերը բնակիչները առայժմ ջրում են դույլերով տնից բերած ջրով: Շինարարությունը ժամանակավորապես կանխվել է բնակիչների բուռն հակազդեցության շնորհիվ:

Հարգարժան քաղաքապետ, նշված տեղանքում շենքի կառուցումը անհեթեթ է բոլոր առումներով: Նախ այն կգրկի դիմացի շենքերի առնվազն չորս հարկի բնակիչներին լույսից, էլ չենք ասում, որ կապականի պուրակի եւ շրջակայքի ողջ տարածքը: Շատ զարմանալի է, թե ինչպես են այսպես կոչված փորձագետները տվել դրական եզրակացություն այդպիսի տեղանքում շինարարության հնարավորության մասին, երբ անհնարին է թվում բեռնատար մեքենաների, ամբարձիչների աշխատանքը այդ նեղ ծառատունկ տարածքում, եւ պարզ է, որ այդ ծառերը շինարարության դեպքում կհատվեն:

Հարգարժան պարոն քաղաքապետ, Ձեզ ենք դիմում նշված տարածքի բազմահազար բնակիչների անունից մեծ խնդրանքով՝ հարգել վերջերս բազմիցս տված Ձեր խոստումը՝ չթույլատրել շինարարություն կանաչ տարածքներում:

Վստահ լինելով, որ ընմբռնումով կմոտենաք մեր դիմումին, խնդրում ենք արգելել որեւէ շինարարություն նշված տարածքում, կանխել անխուսափելի տհաճ բախումները բնակիչների եւ շինարարություն իրականացնողների միջեւ, չստիպել մեզ դիմել այս հարցով հանրապետության նախագահին:

(Բնակիչների ստորագրություններ)

Պետությունը զարնանացան սերմացու կհատկացնի գյուղացիներին

2013-ի գարնանացանի իրականացման գործում հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերելու եւ սերմացուի պահանջարկը մասամբ բավարարելու նպատակով երեկ կառավարության որոշմամբ հաստատվեց 2013-ին գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի եւ կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը: Համաձայն այդ որոշման՝ արտերկրից եւ տեղական սերմնարտադրող կազմակերպություններից ձեռք կբերվի եւ գյուղացիական տնտեսություններին կտրամադրվի 850 տ գարնանացան գարու, 11 տ եգիպտացորենի, 37 տ առվույտի եւ 530 տ կորնգանի սերմացու: Ակնկալվում է, որ ծրագրի իրականացմամբ կավելանան ցանքատարածությունը եւ համախառն բերքը, գյուղացիական տնտեսությունների եկամուտը:

Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ սա կառավարության կարեւորագույն ծրագրերից է, նշելով, որ դրա շնորհիվ արտադրողականության աճ է ապահովվում: «Գինը, որով մենք տալու ենք՝ հաշվի առնելով ներքին հանրապետական գները, շուկայականից ցածր է, եւ շուրջ 40 տոկոսով մենք փաստորեն սուբսիդավորում ենք: Այս անգամ առանձնահատկությունն այն է, որ մեծ ծավալի կորնգան ենք ներկրում՝ առաջին անգամ շուրջ 530 տոննա, որը հիմնականում որպես կեր է օգտագործվում, եւ որն էապես փոխելու է իրավիճակը», ասաց վարչապետը:

Սերմացուի ներկրման համար կառավարության որոշմամբ հատկացվել է ավելի քան 700 մլն դրամ, որից մոտ 616 միլիոնը պետք է ծախսվի Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացված «Տնտեսական կառուցվածքային բարեփոխման աջակցություն» դրամաշնորհային միջոցների հաշվին:

Ա. Մ.

Քավ է: Այլեւս հանդուրժել չի կարելի

Այս ի՞նչ է կատարվում: Դարձյալ ազգովին հայտնվեցինք նույն սատանի օղակո՞ւմ: Դարձյալ տեւական ժամանակ խարխափելո՞ւ ենք նույն գարշահոտ կեղտաջրում: Ամոթ է: Հազար ամոթ: Եվ հիմա առավել ամոթ կլինի, եթե չփորձենք, վերջապես, ազնվորեն ու արդար հանգուցալուծել ու պարզել. սա 1996 թ. միանգամայն որոշակի մարդկանց չարածին ուղեղներում ծլարձակած եւ չարագործ ձեռքերով կատարված ոճիր-նախադեպի հերթական ժայթքո՞ւմ է, թե՞ ինչ-որ մի երանգի հեղափոխության փորձ: (Մեզ էլ հենց դա էր պակասում):

Ի՞նչ ունենք ներկայումս: Հակամարտող, բեւեռացած երկու կողմ:

Առաջին կողմը իշխանությունն է, որը համոզված հայտարարում է, թե ընտրություններն ընթացել են ազնիվ գործընթացով, գուցե չնչին, մասնակի թերություններով, եւ հրապարակված նախնական արդյունքները ճշմարտացի են:

Եկեք մի կողմ թողնենք մեր համակրանքը կամ հակակրանքը իշխանության նկատմամբ եւ հարգելով անմեղության կանխավարկածը՝ ընդունենք, որ իշխանական կողմը ճիշտ է:

Հակամարտող մյուս կողմը «Ժառանգության» առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանն է, որը հայտարարում է, թե ընտրություններն անցել են աղաղակող խախտումներով, իրենք ունեն բազմաթիվ փաստեր, կարող են ցույց տալ դրանք եւ ապացուցել իրենց ճշմարտացիությունը: Եվ իրականում ինքն է հաղթել: Անառարկելի տոնով պնդում է, որ ընտրված նախագահն ինքն է եւ իշխանությունը անհապաղ պետք է հանձնվի իրեն:

Եկեք դարձյալ մի կողմ դնենք մեր անձնական կարծիքը Ռաֆֆի Հովհաննիսյան մարդու եւ քաղաքական գործչի մասին եւ նույն կանխավարկածով հավատանք նրա խոսքերին:

Բայց այդպես չի կարող պատահել: Երկու կողմերից մեկը հաստատ մոլորության մեջ է, կամ, ավելի ճիշտ՝ ստում է: Եվ ես՝ որպես սովորական ընտրող եւ հայ մարդ, որի համար ազգային շահը գերագույն եւ բացարձակ արժեք է, առանձին-առանձին հավատալով երկու կողմերին էլ, հարկադրված եմ... կասկածել:

Նախապես ասեմ, որ ինձ համար անընմբռնելի է իշխանական կողմի առարկությունը չընդունող դիրքորոշումը. այսինքն՝ ամեն ինչ ճիշտ է եւ վերջ:

Մինչդեռ, եթե հստակ բողոք կա, տարրական տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում պետք էր ժամանակավորապես հրաժարվել հաղթական էյֆորիայից եւ հայտարարել. կասկածնե՞ր կան, հարցե՞ր կան, փաստե՞ր կան: Կան համապատասխան ատյաններ: Ներկայացրեք ձեր փաստարկները եւ եկեք միասին սպասենք պատկան մարմինների եզրակացություններին: Այստեղ հարկ է նշել, որ ընդդիմադիր կողմը հավատ չունի այդ ատյանների նկատմամբ: Նա դրա համար ունի իր հիմնավորումները:

Ինձ համար անընդունելի է նաեւ Ռաֆֆի Հովհաննիսյանի վերջնագրային կեցվածքը. ես ութսուն եւ ավելի տոկոսով հաղթել եմ եւ վերջ: Այսինքն օրը, այսինքն ժամին իշխանությունը սկուտեղի վրա բերեք եւ հանձնեք ինձ:

Այդպես չի կարող լինել: Գործող նախագահի օգտին հարյուրհազարավոր քվեարկողներ են եղել (բոլորովին կարեւոր չէ, թե ինչ նկատառումներով կամ ինչ դրդապատճառներով): Նրանք, միանգամայն չեզոք դիրքորոշում ունեցող շատ շատերը, ինչպես նաեւ քվեարկության գործընթացում ներգրավված եւ իրենց պարտականությունները կատարած բազմաթիվ քաղաքացիներ կարող են հավատ չընծայել ընդդիմության պնդումներին: Նրանք էլ կարող են իրենց հանրահավաքն անցկացնել նույն Ազատության հրապարակում: Կարող է եւ բախում լինել: Հետո՞: Ո՞րն է ներքաղաքական այս գլուխկոտրուկի լուծումը:

Առաջարկում եմ Ազգային ժողովի ընձեռած լիազորություններով իշխանական եւ ընդդիմադիր պատգամավորների հավասարաքանակ ներգրավվածությամբ ստեղծել հատուկ քննախույզ հանձնախումբ՝ բողոքող կողմի ներկայացրած փաստարկները, ինչպես նաեւ ընտրատեղամասային բոլոր արձանագրությունները ստուգելու եւ նրանց համապատասխանությունը կնքված պարկերով ԿԸՀ հանձնված ընտրաթերթիկները պարզելու համար:

Կողմերի առաջարկով՝ կարելի է ներգրավել փոխադարձ ընդունելի եւ ժողովրդի մեջ հարգանք վայելող երկուական մտավորականի, Հանրային խորհրդի մեկական ներկայացուցչի եւ լրատվական միջոցների ինչ-որ քանակի հավասար աշխատակիցների: Հանձնախումբը պետք է ունենա երկու համանախագահ: Քվեարկության մեխանիզմի մասին կարելի է պայմանավորվել:

Հանձնախմբի համար պետք է առանձնացնել աշխատավայր (հավանաբար ԿԸՀ-ի տարածքում) եւ հնարավորինս սեղմ, բայց ողջամիտ ժամանակ:

Ճիշտ կլինի, որ իր եզրակացությունը արձանագրելուն կից հանձնախումբը ներկայացնի նաեւ օրենսդրական առաջարկություններ, որոնք միտված լինեն բացառելու նման երեւույթի կրկնությունը:

Եվ մենք կազատվենք վերջապես Սիզիփոսի ողորմելի կարգավիճակից:

ՀՐԱՉ ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ճարտարագետ-նախագծող

Մեր սերնդի աշխարհաքաղաքական նախապատվությունները

Երբ տրված է ընտրելու հնարավորություն՝ որտեղ եւ ում հետ լինել

Վերջին ամիսների ընթացքում հայ ինտելեկտուալների համար վերսին նույն հարցը ձեւակերպվեց. ո՞րն է մեր տեղը գլոբալացված աշխարհում եւ ո՞ր անվտանգային ու տնտեսական համակարգերում է հնարավոր Հայաստանի առջեւ կանգնած բազմաբնույթ ու բազմաթիսի խնդիրներն անարյուն ու անցավ լուծելը: Հարցը կարող էր եւ չձեւակերպվել, եթե այն չտրեին աշխարհի տարբեր հիմնական ուժային կենտրոնների ներկայացուցիչները: Օրինակ, եվրոպական դիվանագետները, ովքեր ասացին, որ անհնար է համատեղել Եվրոպական միությանը Հայաստանի ասոցիացումը Մաքսային միության լիարժեք անդամ դառնալու հետ: Կամ՝ ԱՄՆ նախկին պետական քարտուղար տիկին Հիլարի Քլինթոնը հեռանալուց առաջ ասաց, որ Եվրասիական միության ստեղծումը Խորհրդային Միության վերստեղծման փորձ է, եւ այդ պատճառով էլ դա նրանք թույլ չեն տա: Այս քննարկումները հետաքրքրեցնելու կամ խնդիրը պարզեցնելու համար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ, պրոֆեսոր Վիկտոր Խրիստենկոն դեկտեմբերին հայտարարեց, որ Հայաստանն, իհարկե, եվրասիական երկիր է: Այս անվիճելի թվացող ճշմարտությունը, սակայն, վերջերս ծավալված քննարկումներում բազմաթիվ մեկնաբանությունների եւ դժվար համատեղվող տեսակետների նյութ է դարձել: Նույնիսկ այնքան, որ դժվարանալով կողմնորոշվել պարտադրվող կաղապարների միջեւ, ոմանք նույնիսկ սկսել են մտորել միանգամայն անկախ, ինքնամեկուսացած Հայաստանի հեռանկարի մասին (ինչպես օրինակ՝ Շվեյցարիան ժամանակակից Եվրոպայի մեջ): Թվում էր, թե 200 տարի շարունակ անվիճելի թվացող ճշմարտություններն, ըստ որոնց Արեւելյան Հայաստանը մեկընդմիշտ մաս է կազմել Ռուսական կայսրության, իսկ հետո նաեւ Խորհրդային Միության, եւ դրանով որոշակի աշխարհաքաղաքական միավորման անբաժանելի մասնիկ է դարձել, սկսել են արդեն վիճելի թվալ: Այս հոդվածի նպատակն է միասին մտորելը մեծ աշխարհում մեր անվտանգ ու ապահով տեղի մասին:

Կայունն ու փոփոխականը Տիգրան Մեծից մինչեւ մեր օրերը

Դեռ 4500 տարի առաջ, երբ Հայկական լեռնաշխարհում Հայկ Նահապետի սերունդները սկսեցին ձեւավորել հայկական էթնոսը, մեր նախնիների մասին խոսում էին որպես այն ժամանակվա ամենաքաղաքակիրթ աշխարհաքաղաքական տարածքի՝ Մերձավոր ու Միջին Արեւելքի տեղաբնիկ ժողովրդի մասին: Որքան էլ օտար պատվերներով չարախոսող տարբեր կեղծ գիտնականներ չարախնդան հայերի տեղաբնիկության վրա եւ փորձեն մեզ այստեղից-այնտեղից երկվորներ հայտարարել, օբյեկտիվ գիտական աշխարհի համար անվիճելի է, որ հայ ժողովուրդը որպես ժողովուրդ անհիշելի ժամանակներից մերձավորարեւելյան հնագույն քաղաքակրթության մեկ, անբաժանելի մասն է: Սա պատմություն է եւ իբրեւ պատմություն անվիճելի ճշմարտություն է: 16-17-րդ դդ. թուրք-պարսկական պատերազմների, տեղահանությունների, աննախադեպ ավերի ու թալանի մղձավանջային ժամանակի հետեւանքով հայ ժողովուրդը վերջնականապես բաժանվեց արեւելահայերի եւ արեւմտահայերի: Հայ ազատագրական շարժման լավատես ու տաղանդաշատ մտածողները ամենուրեք օգնություն փնտրելով հայկական բարձրավանդակը օտարադավան ճնշումից եւ հալածանքից ազատագրելու համար, կարողացան հետաքրքրել ու համոզել ռուսական կայսրերին ծավալվել դեպի Առաջավոր Ասիա: 1805-1828թթ. ռուս-պարսկական պատերազմների ընթացքում արեւելահայերով բնակեցված տարածքի մեծ մասը անցավ ռուսական տիրապետության տակ, որտեղ հետ բերվեցին եւ վերահաստատվեցին վերոհիշյալ տեղահանություններից փրկված հայերի ժառանգները: Համենայն դեպս, այդպես հիմնավորեցին Իրանում դեսպան Ալեքսանդր Գրիբոյեդովն ու իր համախոհները Իրանի շահին ուղղված այդ պահանջը: Այսպիսով, ռուսական թագի հովանու տակ անցած հաստվածում այդ դեպքերից երկու տասնամյակ անց հայությունը կրկին սկսեց կազմել բնակչության մեծամասնությունը: Հենց այդ ժամանակներից էլ Արեւելյան Հայաստանն ընդունված է եղել անվանել ռուսական ազդեցության գոտի, նաեւ այդ պատճառով է այն դարձել 20-րդ դ. աշխարհաքաղաքական իմաստով նախկին կայսրությանը փոխարինած ԽՍՀՄ-ի մաս: Արեւմտյան Հայաստանը մնաց Օսմանյան կայսրության կազմում եւ չորս անգամ գրավվելով ռուսական զորքերի կողմից, դիվանագիտական եւ քաղաքական խաղերի ազդեցության տակ չորս անգամ էլ վերադարձվեց թուրքերին: Այդ չորս անգամներից յուրաքանչյուրից հետո թուրքական վայրագություններից փրկված հազարավոր արեւմտահայեր կամ վերահաստատվեցին Արեւելյան Հայաստանում, կամ դարձան գաղթականներ: 1896-1918թթ. ընթացքում տեղաբնիկ արեւմտահայությունը ամբողջովին ցեղասպանության ենթարկվեց: Այնպես որ Առաջին աշխարհամարտից հետո ռուսական զորքերի անկանոն նահանջի պարագայում Խորհրդային Ռուսաստանի ղեկավարը ստորագրեց մի դեկրետ Արեւմտյան Հայաստանի անկախությունը ճանաչելու վերաբերյալ, սակայն գործնականում անիրականանալի այն պարզ պատճառով, որ Արեւմտյան Հայաստանում ֆիզիկապես գոյություն չուներ այն բնակչությունը, որը պետք է ընտրեր իր սովետները եւ կառուցեր պետություն: Ահա այսպես Մերձավոր Արեւելքի մաս կազմող Արեւմտահայաստանը դադարեց քաղաքական եւ աշխարհաքաղաքական կատեգորիա լինելուց: Իսկ Արեւելյան Հայաստանը տնտեսական քայքայվածության, տարածքի փոքրության եւ ինքնուրույն խոշոր հետաքրքրություն ներկայացնելու հնարավորությունից զրկված դադարեց «Հայկական մարզ» անունը կրելուց եւ բաժանված լինելով հինգ վարչական միավորների մեջ, դարձավ կովկասյան փոխարքայության մի հատվածը: Խորհրդային ժամանակներում տնտեսական քայքայումը վերականգնելու նույն վարչական բացատրությունների ուժով էլ Հայկական ԽՍՀ դարձած Արեւելյան Հայաստանը մինչեւ 1936թ. հանդիսացավ Խորհրդային Անդրկովկասի մաս:

Այսօր մեր մտավորականներից շատերը, փորձելով պատմության մեջ փնտրել մեր ներդաշնակ գոյության առհավաստյան, մեզ հիշեցնում են, որ հայ ժողովուրդը ոչ թե կովկասյան ժողովուրդ է, այլ մերձավորարեւելյան կամ առաջավորասիական: Այս տրամաբանությամբ կովկասյան ժողովուրդ են միայն վրացիները, իսկ ադրբեջանցիները՝ թյուրքական լեզվաընտանիքի մի մաս: Անդրկովկաս կամ Հարավային Կովկաս աշխարհաքաղաքական եզրը մեր օրերում արդյոք ունի՞ քաղաքագիտական կամ աշխարհաքաղաքական բովանդակություն: Պարզ է, որ Անդրկովկասը Կովկասյան լեռներից այն կողմն է Ռուսաստանի համար: Պարզ է, որ Այսրկովկասը Կովկասյան լեռների մեր կողմն է այս կողմից նայողների համար: Պարզ է, որ Կովկասի երկու կողմերը՝ հյուսիսն ու հարավը մեկ ամբողջության՝ Մեծ Կովկասի մեջ ներառելը խոսում է աշխարհաքաղաքական հետաքրքրությունների մասին մեր տարածաշրջանի մեծ հարեւանների՝ Ռուսաստանի, Թուրքիայի եւ Իրանի կողմից: Այսպիսով, ուզեք թե չուզեք, օգտագործելով աշխարհաքաղաքական մեր միավորին տրվող վերոհիշյալ անվանումներից մեկնումեկը, դուք օբյեկտիվորեն սկսում եք դաստել աշխարհաքաղաքական այս կամ այն նախապատվությունների շրջանակներում:

Եվրոպականությունն ու եվրասիականությունը՝ մի ափի մեջ

Մեզ պարտադրված բանավեճի իմաստը, խոշոր հաշվով, ստիպելն է մեր քաղաքական վերնախավին ընտրություն կատարել Եվրոպայի եւ Ռուսաստանի միջեւ: Այս ճնշումը, մանավանդ եթե ուղղորդվի մեր բազմավեկտոր արտաքին քաղաքականության զորաշարժի հնարավորությունը սահմանափակելունն ուղղված գործողություններով, կարող է պատճառ դառնալ հասարակական կամ քաղաքական նոր ներքին լարվածության, մի նոր հիասթափության եւ ահագնացող անտարբերության: Հենց դրա համար էլ մեր քաղաքական վերնախավի այն միանգամայն հավասարակշռված դատողությունները եւ հայտարարությունները այն մասին, որ ինտեգրացիայի այս երկու գործընթացների միջեւ ներքին հակասություն չկա, ոչ միայն ճիշտ են, այլեւ ազնիվ մեր քաղաքական մտածողության ավանդույթների տեսանկյունից: Եվ իսկապես, մեր հասարակական-քաղաքական մտքի ամբողջ պատմությունը նոր ժամանակներում գալիս է հաստատելու, որ մեր հասարակության նոր գաղափարները, առաջընթացի պատկերացումները, անվտանգության երաշխիքները, վերջապես քաղաքակրթական դիմագիծը ձեւավորվել են թե՛ ռուսական, թե՛ եվրոպական ուղղակի ազդեցությունների խաչմերուկներում: Էլ չենք ասում այն մասին, որ ինքը՝ ռուսական հասարակական քաղաքական միտքը, վերջին 130 տարիների ընթացքում անընդհատ հղկվել է ռուսականության (սլավոնականության) եւ արեւմտականության գաղափարների բախման արդյունքում: Հիմա շատ է խոսվում եվրասիականության մասին: Եվրասիականության գաղափարախոսությունը, մեծ վերապահումով, կարելի է դաշինքը Ռուսաստանի եւ նրա մերձավոր դաշնակիցների հետ: Անցած քսան տարիների ընթացքում աշխարհի ուրիշ եւ ոչ մի պետություն կամ դաշինք մեզ չեն տվել անվտանգության այնպիսի երաշխիք, ինչպիսին տվել է ՀԱՊԿ-ը, եւ, մասնավորապես, Ռուսաստանը: Նրանք, ովքեր ցինիկորեն վիճարկում են այս պարզ ճշմարտությունը եւ փորձում են եվրոպական կամ արեւմտյան արժեքները հակադրել անվտանգային այս պատկերացումներին, կրկնում են այն նույն սխալները, ինչ որ վերջին 300 տարում մեր նախնիները արդեն մի քանի անգամ արել են:

Մենք կարող ենք շարունակել պարզ հայեցողի կրավորական դերում մնալ եւ սպասել, թե ինչով կվերջանա Արեւմուտք-Ռուսաստան եւ Ռուսաստան-Չինաստան գլոբալ բանավեճ-երկխոսությունը: Թերեւս դա է այն մտածողների շարժառիթը, որոնք խոսում են հավասարահեռ եւ հավասարամոտ Հայաստանի մասին: Այսինքն՝ Եվրոպային եւ Ռուսաստանին հավասարապես մոտ, կամ որ նույնն է՝ Եվրոպայից եւ Ռուսաստանից հավասարապես հեռու: Մեր այն խոշոր տնտեսագետները, ովքեր խոսում են Եվրոպական միություն-Շվեյցարիա նախատիպի մասին, հենց այս գաղափարի կրողներն են: Կա եւ այլ տարբերակ. միացնել մեր ջանքերը մեր աշխարհաքաղաքական դաշնակիցների այն ջանքերին, որոնք ուղղված են լինելու Եվրոպական միության եւ Ռուսաստանի միջեւ գոյություն ունեցող պատը քանդելուն: Եվ այդպիսով փորձել իրականություն դարձնել Մեծ Եվրոպայի տեսլականը, որը, ԴԴ նախագահ Պուտինի խոսքերով, կարող է տարածվել Լիսաբոնից մինչեւ Վլադիվոստոկ: Այն, որ եվրոչինովնիկների մեջ այս գաղափարների կրողներ չկան եւ չեն լինելու, միանգամայն հասկանալի եւ բացատրելի է, բայց անհնար է, որ նոր Եվրոպայում բնական ծավալման այսպիսի հնարավորության կողմնակիցներն իսպառ բացակայեն:

Եվ վերջինը: Մեր ինտելեկտուալ վերնախավի որոշ ներկայացուցիչներ վճռականապես համաձայն չէին, թե, օրինակ, Հայաստանը եւ Վրաստանը Մեծ Մերձավոր Արեւելքի մաս դարձնելու ծրագրի մի դրսեւորում է այդ մասին Վիկիպեդիայում անհամար հոդվածներ տեղավորելը: Նրանք ֆնծիծաղով ասում էին, որ Վիկիպեդիան այնքան ոչ պատշտոնական բան է, որ որեւէ անհամաձայն մարդ կարող է դրանք ջնջել: Ես էլ ուզում եմ հարցնել. ինչո՞ւ մինչեւ հիմա ոչ մեկի մտքով չի անցել Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը Մեծ Մերձավոր Արեւելքի պետությունների ցուցակից հանելը: Արդյոք մենք համաձա՞յն ենք 90-ական թթ. սկզբին ձեւավորված այն ծրագրին, ըստ որի Հարավային Կովկասը ոչ թե եվրասիական տարածքի, այլ Մեծ Մերձավոր Արեւելքի մասն է:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու

Ադրբեջանական «վիկիլիֆ»-ից՝ նոր բացահայտում

Բաքվի՝ գործունեությունը դադարեցված միջազգային համալսարանի նախկին ռեկտոր Էլշադ Աբդուլլաեւը, որը վստահանդի է եւ ապրում է Ֆրանսիայում, համացանցում տեղադրել է հերթական տեսահոլովակը, որ նկարահանվել է 2004-ին: Այս անգամ նրա զրուցակիցը Հեյդար Ալիեւի անվան միջազգային օդանավակայանի ոստիկանական վարչության պետի տեղակալ Ռասիմ Իլդըրըմզադեն է:

Խոսակցության թեման Աբդուլլաեւի առեւանգված եղբոր՝ Մահիրի «վերադարձն» է: Իլդըրըմզադեն ասում է, որ Մահիրը «պահվում է Ադրբեջանից դուրս», ինքը նրան տեսել է, «նրա հետ ամեն ինչ կարգին է»: Ազգային անվտանգության մայոր Մահիր Աբդուլլաեւը մեկ տասնամյակից ավելի համարվում է «անհայտ կորած»: Մինչդեռ տեսահոլովակից պարզվում է, որ «Մահիրին ոչ թե շարֆային ավազակներ են գողացել, այլ՝ կառավարությունից»: Ոստիկանության բարձրաստիճան սպան Աբդուլլաեւից 1 մլն դոլար է պահանջում՝ «մի չորս-հինգ օրից» նրա եղբորը վերադարձնելու դիմաց:

Իլդըրըմզադեն Աբդուլլաեւին խորհուրդ է տալիս ուրիշ ոչ մեկի հետ չքննարկել եղբոր հարցը եւ ավելացնում, որ իր «տանիքը Ռամիլ Ուսուբովն է եւ Ռամիզ Մեհթիեւը»: Խոսքը Ադրբեջանի ՆԳ նախարարի եւ նախագահի աշխատակազմի ղեկավարի մասին է: Վստահանդի Էլշադ Աբդուլլաեւը պնդում է, որ Իլհամ Ալիեւի նախագահությամբ Ադրբեջանում ստեղծվել եւ գործում են «մահվան էսկադրոն»-ներ, որոնց միջոցով վարչախումբը հաշվեհարդար է տեսնում քաղաքական ընդդիմախոսների հետ: Աբդուլլաեւը «մահվան էսկադրոն»-ների ղեկավար է համարում Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւին:

Նրա տարածած վերջին տեսահոլովակը, սակայն, ուղղված է նաեւ ՆԳ նախարար Ուսուբովի դեմ: Տեսահոլովակի «հերոս» Ռասիմ Իլդըրըմզադեն Ուսուբովի մերձավոր ազգականներից է: Նրա եղբայրը՝ Յուսիֆ Իլդըրըմզադեն, զբաղեցնում է Բաքվի Խաթայիի շրջանի դասախազի պաշտոնը: Երեկ, տեսահոլովակը սոցցանցերում տարածվելուց մի քանի ժամ հետո «կտրուկ վատթարացել է Յուսիֆ Իլդըրմզադեի առողջական վիճակը, եւ նա շտապ բուժման է մեկնել արտերկիր»: Այդպես է ասված դասախազության հաղորդագրության մեջ: Իսկ Խաթայիի շրջդասախազությունից հաստատել են նրա «արձակուրդում գտնվելու փաստը»:

Ռասիմ Իլդըրըմզադեն էլ իր հերթին հայտարարել է, որ «Էլշադ Աբդուլլաեւն ինքն է հանցագործ»: Այդուհանդերձ, միայն փաստը, որ տեսահոլովակի տարածումը «կտրուկ վատթարացրել է դասախազ Իլդըրըմզադեի առողջական վիճակը», եւ նա շտապ մեկնել է արտերկիր, արդեն իսկ չափազանց խոսուն է: Մնում է փորձել հասկանալ, թե սկանդալն ինչպե՞ս կանդրադառնա ՆԳ երկարամյա նախարար Ռամիլ Ուսուբովի կարիերայի վրա, եթե ապացուցվի, որ նրա մերձավոր բարեկամ Իլդըրըմզադե եղբայրներն իրոք դրամաշորթությամբ են զբաղվել եւ տեղյակ են եղել առեւանգված Մահիր Աբդուլլաեւի գտնվելու վայրի մասին:

Ուսուբովն առհասարակ առեղծվածային դեմք է Ադրբեջանի քաղաքական վերնախավում: Ծնունդով Խոջալու գյուղից՝ նա տարիներ աշխատել է ոստիկանության Լեռնային Ղարաբաղի մարմիններում, շատ կարճ ժամանակամիջոցում հասնելով ՆԳ մարզային վարչության պետի տեղակալի պաշտոնին, ապա նրա հանդեպ կայացվել է կտրուկ որոշում. Ուսուբովը նշանակում է սացել ԼՂ-ից դուրս: Ադրբեջանի ՆԳ նախարարի պաշտոնը նա զբաղեցնում է 1994թ.-ից: Գեներալ-գնդապետ Ռամիլ Ուսուբովը 67 տարեկան է: Եվ հանգիստ կարող է անցնել թոշակի: Եթե, իհարկե, հանգամանքները թույլ տան: Հնարավոր է, որ ամեն ինչ դասավորվի այլ կերպ. տեղեկատվություն կա, որ Ադրբեջանի հատուկ ծառայությունները մշակել եւ մտադիր են Ֆրանսիայում իրականացնել Էլշադ Աբդուլլաեւին առեւանգելու եւ Բաքու տանելու հատուկ գործողություն: Ի պատասխան Աբդուլլաեւի օգնականներից մեկը «Թուրան» գործակալությանը տեղեկացրել է, որ իրենք «Ստրասբուրգում ապրում են ֆրանսիական գաղտնի գործակալների հովանու ներքո եւ հուսալիորեն պաշտպանված են»:

Վ. Ա.

Պորտուգալիայում առգրավվել է «բարձր որակի» կեղծ եվրո

Պորտուգալիայի ոստիկանությունը երեկ առգրավել է կեղծ թղթադրամների շատ մեծ քանակություն: BBC-ն հաղորդում է, որ Պորտու քաղաքում ոստիկանության իրականացրած հատուկ գործողության ընթացքում առգրավվել է 200 եվրո անվանական արժեքով 1901 թղթադրամ: Քննության շրջանակներում կալանավորվել է 36-ամյա մի օտարերկրացի, որի անունն ու քաղաքացիությունը չեն հրապարակվում:

Կեղծ թղթադրամները աչքի են ընկնում «ակնառու որակով»: Նախնական տվյալների համաձայն, նման թղթադրամներ մի քանի տարի շրջանառվել են Իսպանիայում, Իտալիայում, Գերմանիայում, Բուլղարիայում եւ Պորտուգալիայում:

2013-ի փետրվարին սա Պորտու քաղաքում առգրավված կեղծ թղթադրամների արդեն երկրորդ քանակությունն է: Առաջին անգամ առգրավվել էին 20 եւ 50 եվրո անվանական արժեքով կեղծ թղթադրամներ 30 հազար եվրո ընդհանուր գումարով:

2009-ին Բուլղարիայում դրամանենգներից առգրավվել էին 390 հազար եվրո ընդհանուր գումարով կեղծ թղթադրամներ (100, 200 եւ 500 եվրո):

Սիրիա

Պայթյուն Դամասկոսում «Բասի» գրասենյակի մոտ

Ապստամբները դուրս են մղվել Հալեպի օդանավակայանից

Սիրիացի ապստամբները փետրվարի 21-ին Դամասկոսում ականված ավտոմեքենա են պայթեցրել կառավարող «Բաաս» կուսակցության կենտրոնական գրասենյակի մոտ, հաղորդում է «Ֆրանսպրես» գործակալությունը: Պայթյունից վնասվել է ոչ միայն գրասենյակի շենքը, այլեւ մոտակայքում գտնվող ՌԴ դեսպանատունը: ՌԻԱ գործակալության տվյալներով, փշրվել են դեսպանատան գրեթե բոլոր ապակիները: Զոհերի կամ վիրավորների գոյության վերաբերյալ տեղեկություններ չեն հրապարակվել:

Սիրիայի պետական լրատվամիջոցները պայթյունը բնութագրել են որպես «վարձկանների զինված ելուզակախմբերի իրականացրած ահաբեկչություն»: Մինչդեռ ապստամբները նախընտրում են նման դիվերսիաներն անվանել «վարչակարգի եւ դրա կամակատարների դեմ ուղղված հաջող գործողություն»:

Պայթյունի պատասխանատվությունը Սիրիայի ապստամբական խմբավորումներից որեւէ մեկը չի ստանձնել, սակայն պայթեցման «ձեռագիրը» ցույց է տալիս, որ դրա կազմակերպմանը մասնակցել են սունի ծայրահեղականների «Ան Նուսրա ճակատի» իսլամիստները: Այդ «ճակատը» ԱՄՆ-ում համարվում է ահաբեկչական կազմակերպություն:

Ավելի վաղ՝ փետրվարի 20-ի հետմիջօրեին Սիրիայի կառավարական ուժերը վերականգնել էին լիակատար վերահսկողությունը Հալեպի միջազգային օդանավակայանի ամբողջ տարածքում: «Ասոշիեյթեդ պրես» գործակալությունը նշում է, որ դրանից մեկ շաբաթ առաջ ապստամբները իրենց վերահսկողության տակ էին առել քաղաքացիական օդանավակայանի կողքին գտնվող «Ալ Նեյրաբ» ավիաբազան, միաժամանակ գրավելով մի քանի պահակակետ: Այդ ամենի հետեւանքով Հալեպի օդանավակայանում դադարեցվել էին կանոնավոր չվերթերը, իսկ օդակայանը եւ հարակից կառույցները դարձել էին ապստամբների եւ կառավարական զորքերի կատաղի բախումների ասպարեզ:

Հալեպի օդանավակայանը քաղաքի շրջակայքում կառավարական ուժերի գլխավոր հենակետերից մեկն է: Մասնավորապես օդանավակայանով են քաղաք բերվում հավելյալ զորքեր, այնտեղով են իրականացվում բանակի մատակարարումները: Օդանավակայանի կորուստը երկրի հյուսիսում լուրջ հարված կլիներ բանակի դիրքերին:

Հալեպում կառավարական ուժերն ապստամբների դեմ մարտեր են մղում 2012-ի ամռանից:

«Ալ Արաբիա» հեռուստալիքի տեղեկությունների համաձայն, սիրիացի ապստամբների «Սիրիայի ազատ բանակը» երեկ վերջնագիր է ներկայացրել լիբանանյան շիա արմատականների «Հզբոլլահ» խմբավորմանը: Վերջինիս գրոհայիններին 24 ժամ է տրված Սիրիայի տարածքից հեռանալու համար: Ապստամբները սպառնացել են հակառակ դեպքում հարվածներ հասցնել Լիբանանի հարավում գտնվող շիա արմատականների հենակետերին:

Ապստամբների ներկայացուցիչ Խաղի ալ Աբդալլահը հեռուստալիքին հայտնել է, որ իրենց սպառնալիքներին ի պատասխան՝ «Հզբոլլահը» սկսել է գրոհայիններին կուսակել սիրիական սահմանի մոտ: Նա պատմել է, որ երկու օր առաջ ապստամբները կառավարական ուժերից խլած երկու տանկերով հետ էին մղել Սիրիայում մի քանի գյուղ գրաված «Հզբոլլահի» մարտիկների գրոհը:

Ռուս-բրազիլական առեւտրատնտեսական, ռազմական եւ գիտական համաձայնագրեր

Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը փետրվարի 21-ին Բրազիլիայում իր երկօրյա այցն ավարտել է մի շարք կարեւոր պայմանագրերի ստորագրմամբ: Դրանք վերաբերում են մասնավորապես հակաօդային պաշտպանությանը, էներգետիկային եւ առեւտրին: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ ռուս-բրազիլական ապրանքաշրջառության ծավալը հասցվելու է տարեկան 10 մլրդ դոլարի: Մեդվեդեւի այցի մյուս կարեւոր թեման երկկողմ ռազմավարական գործընկերության շարունակումն է: Այդ մասին Դմիտրի Մեդվեդեւը խոսել է Բրազիլիայի նախագահ Դիլմա Ռուսեֆի հետ, ինչպես նաեւ նախարարական խորհրդակցության ժամանակ:

Կարեւոր որոշումների մշակմամբ զբաղվում է համագործակցության երկկողմ հանձնաժողովը, որի մեջ մտնում են նախարարներ եւ գործակալությունների ղեկավարներ:

Ստորագրված համատեղ փաստաթղթերը վերաբերում են տնտեսության տարբեր ճյուղերի: Մասնավորապես ձեռք է բերվել համաձայնություն ռուսական ցորենի արտահանման վերաբերյալ: Բրազիլիային հետաքրքրում են հակաօդային պաշտպանության «Իգլա» եւ «Պանցիր-Ս1» համակարգերը:

Բրազիլիա քաղաքի համալսարանական մասնաշենքերից մեկում արդեն տեղավորվել է ԳԼՈՆԱՍՍ ճշգրիտ տեղորոշման համակարգի ներկայացուցչությունը:

Բացի այս ամենից, վարչապետ Մեդվեդեւը ռուսական մշակութային ժառանգության պահպանման գործի բրազիլացի նվիրյալներին պարգեւատրել է Պուշկինի մեդալով: Դափնեկիրներից մեկը Պաուլո Բեզեռան է, որը պորտուգալերեն է թարգմանել ռուս մի շարք դասական եւ ժամանակակից հեղինակների երկեր: Մյուսը Սան Պաուլուի նահանգում երկու տասնամյակ ռուսական երգչախումբ ղեկավարող Գալինա Շեւչուկն է:

Պչաճյանի «Անկարելի կարելին» պիեսի շոնդալից հաջողությունը Մոնրեալում

«Միակ իսկական խռովությունը երջանկության որոնումն է», ասել է նորվեգացի դրամատուրգ Հենրիկ Իբսենը: Երջանկության որոնման վրա է հիմնված Մովսես Պչաճյանի «Անկարելի կարելին» թատերգությունը, որ թեեւ գրվել է 40 տարիներ առաջ, սակայն բեմադրվել՝ ընդամենը երկու անգամ: Մեկը մոտ 30 տարի առաջ ամբողջական երեք գործողությամբ եւ երեք ժամ տեւողությամբ, մյուսը՝ բավական կրճատումներով եւ փոփոխություններով՝ երկու ժամ տեւողությամբ: Ըստ հեղինակի բնորոշման, «Զաւեշտ մը չէ ան եւ չէ գրուած որոմէս կատակերգութիւն մը, թէեւ ծիծաղաշարժ շատ բաժիններ ունի, այլ՝ համամարդկային բարատոհսներու փիլիսոփայական մտածումներ յառաջացնող նիւթ մըն է»:

Այս յուրահատուկ պիեսը դեկտեմբերին Մոնրեալի (Կանադա) «Բոբուա» թոլեջի հանդիսասրահում հանդիսատեսներին է ներկայացրել տեղի Թեֆեյան մշակութային միության «Հայ բեմ» թատերախումբը, բեմադրությամբ Նենսի Իսսա Թորոսյանի: Երկու իրարահաջորդ ներկայացումները արձանագրել են աննախադեմ հաջողություն, շնորհիվ արհեստավարժ դերասան, դերուսույց եւ բեմադրիչ Թորոսյանի, որ տեղի «Ապագայ» շաբաթաթերթի խմբագրությանը տված իր հարցազրույցում նշել է, որ ծնվել է Արգենտինայում, բժիշկների ընտանիքում, բայց 9 տարի առաջ ամուսնու եւ երկու զավակների հետ հաստատվել է Մոնրեալում: Մոտ 20 տարի աշխատել է որպես դերասան, միեւնույն ժամանակ դերասանություն ուսուցանել ինչպես Արգենտինայի, այնպես էլ Կանադայի մեջ: Հետո անցել է բեմադրության: Որպես դերասան կամ բեմադրիչ մասնակցել է մոտ 30 թատերախաղերի, որոնց թվում իսպանացի բանաստեղծ եւ թատերագիր Գարսիա Լորկայի ստեղծագործությունների հիման վրա գրված պիեսներ: Պչաճյանի վերոնշյալ գործին շատ պատահականորեն է ծանոթացել. «Երկար փնտռտուքներէ ետք, առտու մը կրկին անգամ ԹՄՄ-ի գրադարանը գացի, եւ կարծէք անտես ձեռք մը զիս առաջնորդեց «Անկարելի կարելին» հատորին եւ անմիջապես կաղը ստեղծուեցաւ, եւ ես սիրահարուեցայ առաջին իսկ վայրկեանէն», խոստովանել է նա:

Գալով սյուժեին, դա մեր եւ երջանկության երկու աշխարհների հանդիպման պատմությունն է: Բեմը այդ հանդիպման վայրն է, որտեղ մեր աշխարհից եկածները հարցուփորձի են ենթարկվում, որպեսզի պարզվի, թե արժանի՞ են արդյոք երջանկության աշխարհը մուտք գործելու, թե՞ ոչ: Ընդհանուր առմամբ երգիծական եւ զվարճալի նյութ լինելով, այն իրականում չափազանց լուրջ հենք ունի, որը հարցադրումներ հարուցանող է եւ մտքեր բորբոքող:

Վերոնշյալ բեմադրությանը մասնակցել են երիտասարդ դերասաններ Մերի Թաշճյանը, Մեղեդի Աղուրյանը, Արեն Մանուկյանը, Ռոբերտ Գրիգորյանը, Պատրիկ Կամելը, Մարի-Լոր Սիմեոնին, Վիգեն Ֆռունճյանը, Ռազմիկ Օգուզուշյանը, Արամազդ Իսրայելյանը եւ Արտեն Արաբյանը, որոնց դերասանական «կոփումը», ըստ սփյուռքահայ մամուլի հաղորդագրություններին, մենք կը պարտիմք անկասկած բեմադրիչի բացառիկ տաղանդին, կարողությանը եւ փորձառությանը»:

Ինչ վերաբերում է պիեսի հեղինակին, Մովսես Պչաճյանը ծնվել է 1940-ին, Հալեպում (Սիրիա): Ուսանել է Համազգայինի Կարեն եփփէ ճեմարանում, որտեղ էլ հետագայում նաեւ դասավանդել է: Սկսել է գրել երիտասարդ տարիից եւ թարգմանություններ կատարել հատկապես անգլերեն եւ ֆրանսերեն գրական էջերից: 1976-ին տեղափոխվել է Փարիզ, որտեղ եւ բնակվում է ներկայումս: Փարիզում ուսուցչությանը զուգահեռ երկար տարիներ վարել է տեղի Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու դիվանապետությունը: Հեղինակ է 11 մեծածավալ հատորների՝ վեպեր, պատմվածքներ, հուշագրություններ եւ թատերգություններ: Դրանց թվում են «Անկարելի կարելին» (1973), «Բարեւ, Հայաստան» (1975), «Կեռասի ժամանակէն վերջ եւ առաջ» (1983), «Լուսագք փռուած տանիքի վրայ» (1987), «Ծիծեռնակները տիտի չսարսափին խրտուիլակներէն» (1990), «Լուսաւոր աչքերով օտարականը» (1993), «Մինչեւ վերջինը արեւերուն» (2001), «Անցողիկը եւ անժամանցելին» (2005) եւ «Վարագոյրը իջնել է առաջ»-«Խմելով խաղաքը» (2009): Դրանցից «Ծիծեռնակները...» արժանացել է ԹՄՄ-ի «Հայկաշէն Ուզուսեան» 1990 թվականի գրական մրցանակին: Իսկ դրանից առաջ 1981-ին «Անկանխատեսելին» պատմվածքը ճանաչվել է Համազգայինի «Բագին» գրական հանդեսի տարվա լավագույն արձակ ստեղծագործությունը: 2009-ին Պչաճյանը ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» շքանշանով, իսկ 2010-ին Գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալին:

Ֆրանսահայ վաստակավոր գրողը եւ նախկին դաստիարակը Մոնրեալում ԹՄՄ-ի հրավերով ներկա է գտնվել իր հեղինակած թատերգության բեմադրությանը:

Ավելացնենք, որ ԹՄՄ-ի «Հայ բեմ» թատերախումբը, հզորացած երիտասարդ դերասանների նոր ուժերով, արհեստավարժ բեմադրիչով եւ օժանդակողների բանակով, պատրաստվում է նոր անակնկալներ պարգեւել մոնրեալահայ մշակութասեր հասարակությանը: «Ապագայ» թերթի փոխանցմամբ, առաջիկա ապրիլի 13-ին եւ 21-ին թատերախումբը ներկայացնելու է Ռիչարդ Կալինոսկու «Գազանը Լուսնի վրա» պիեսը, որ միջազգային մի շարք մրցանակների է արդեն արժանացել:

Նորանոր հաջողություններ ենք ցանկանում ԹՄՄ-ի թատերախմբին եւ Մովսես Պչաճյանին:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն շարունակում է կրթական ժամանակակից լաբորատորիաներով բուհերի վերազինման ծրագիրը

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորն ընդառաջ է գնում ուսումնական նպատակներն իրագործելու բուհերի ռազմավարությանը: Տեխնիկապես հագեցված կրթական լաբորատորիան, համացանցի ընձեռած տեղեկատվական հզոր բազան եւ ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակակից մեթոդն այսուհետեւ հասանելի կլինեն նաեւ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Բուհը համալրվել է ուսումնական գործընթացների պահանջներից բխող արժեքավոր սարքավորումներով. «Home-Zone Turbo» փաթեթի շրջանակում գործող 3G երթուղիչով, ինտերնետ հասանելիությամբ, 9 համակարգչով ապահովված լսարանով, լազերային տպիչով եւ լուսարձակով ապահովված ինտերակտիվ գրատախտակով: Նոր հնարավորությունները համալսարանին թույլ կտան առցանց միանալ Վանաձորում եւ Արցախում գործող մասնաճյուղերին եւ արդյունավետ դասընթացներ կազմակերպել ուսանողների ավելի լայն լսարանի համար:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանն ունի այս լաբորատորիայից առավելագույն արդյունավետությամբ օգտվելու հաջողված փորձ: ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ համագործակցության արդյունքում, համալսարանի Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոնում, դեռ մեկ տարի առաջ է սկսել գործել տեսակոնֆերանսների ժամանակակից դահլիճը, որը համացանցի միջոցով վիրտուալ կատարյալ ուսումնական միջավայր է ապահովել այս եւ արտերկրյա հեղինակավոր համալսարանների միջեւ:

«Նոր տեխնոլոգիաները ենթադրում են ժամանակի տնտեսում, տեղեկատվության բարձր մակարդակ եւ արագ որոշումներ կայացնելու հմտություն: Մենք ձգտել ենք ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովելու են ուսանողի հաջողելու հավանականությունը: Մասնագիտացման ճանապարհին նրանց ճիշտ ուղղորդելու առաջին քայլը, թերեւս, եղած տեղեկատվությունից առավելագույնս ճիշտ եւ արդյունավետ օգտվելու հմտության ուսուցանումն է»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Համալսարանի հետ մասնավոր հատվածի հաջողված համագործակցությունը գնահատելու նպատակով, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը կազմակերպել է «Ոսկե հասկ» մրցանակաբաշխության հերթական միջոցառումը: ՎիվաՍել-ՄՏՍ-ը մրցանակի է արժանացել «Համալսարանի լավագույնս գործընկեր» անվանակարգում:

ՄԱՅՆԻ ՖՐԱՆԿՖՈՒՐՏ

Ղարաբաղի ծիծաղը՝ գերմաներեն

Մայնի Ֆրանկֆուրտում գործող «Հայ մեդիա» հրատարակչությունը 2012-ի դեկտեմբերին լույս է ընծայել «Ղարաբաղ. ծիծաղող հայերի երկիր. հեքիաթների ու լեգենդների երկիր» ժողովածուն: Գիրքը հեղինակել են Ղարիբ Բաբայանն ու Արմեն Արզումանյանը: 80 էջանոց ժողովածուի գինը 8,80 եվրո է:

Ղարաբաղի կենսասեր բնակիչների՝ հայ պարզ, կատակասեր մարդկանց ու նրանց պատմություններն է ներկայացնում գիրքը: Նույնիսկ դժվարագույն իրավիճակներում լավատեսությունը նրանք չեն կորցնում՝ կրկնելով՝ «կտեսնես, ամեն ինչ լավ է լինելու»:

Ժողովածուին անդրադարձել է գերմանական «Մերկիրե ալգեմայնե» թերթը՝ զրույցի հրավիրելով գրքի հեղինակներից Արմեն Արզումանյանին: Անդրադառնալով Ղարաբաղի խնդրահարույց պատմությանը՝ թղթակից Նադին Պենզոլդը հիշեցնում է, թե նախկինում Հայաստանի մաս կազմած Ղարաբաղն այժմ Ադրբեջանին է պատկանում: «Եթե որեւէ ղարաբաղցու ասես, թե ինքը Ադրբեջանին է պատկանում, խնդիր կունենաք, հակադարձում է Արզումանյանը, հայերը 3000 տարի է, ինչ Ղարաբաղում են բնակվում: Սա նրանց հայրենիքն է: Այս փաստը ոչ ոք չի կարող փոխել: Այսօր Ղարաբաղի հանրաքվեությունն ազատ երկիր է, իր ժողովրդավարական ճանապարհով ընտրված նախագահով, որը տակավին չի ճանաչվել համաշխարհային հանրության կողմից»: «Ինչո՞ւ Ձեր գրքում չեք կարեւորել վերոբերյալը», հարցին Արզումանյանը պատասխանում է, թե գրքի համահեղինակ ղարաբաղցի Ղարիբ Բաբայանի հետ ջանացել են գրքում քաղաքականությանը չանդրադառնալ, քանի որ «Ղարաբաղի քաղաքական իրավիճակի մասին բանավեճ հարուցող գրքեր շատ կան, բայց չկա գիրք, որ նկարագրում է այնտեղ ապրող մարդկանց: Սա ուրախ գիրք պիտի լիներ: Լրատվամիջոցներում հաճախ շատ վատ են ներկայացնում ղարաբաղցիներին, ուզում էինք ցույց տալ, որ այնտեղ ապրողները շատ պարզ մարդիկ են, որ նրանցից որեւէ մեկը պատերազմ չի ուզում»: Անդրադառնալով ուրախ պատմություններով գիրք ստեղծելու գաղափարին, Արզումանյանը ներկայացնում է, թե իր նախնիները Ղարաբաղից են, հեքիաթների ու լեգենդների երկիր Ղարաբաղում շատ պատմություններ են իրեն տպավորել: Երբեք չի մոռանում արձակուրդներին պապ ու տատի մոտ լեռներում անցկացրած օրերը, նրանցից ստացած ջերմությունը, դաստիարակությունը: Ղարաբաղցիներն առանձնահատուկ մտայնություններ ունեն՝ հաճույքով են ծիծաղում, հյուրընկալ են, շատ ասող-խոսող, բայց նաեւ՝ շատ համառ: «Մյդ է պատճառը, որ գրքի շատ դրվագներում ավանակը ներկա է», հարցին Արզումանյանը պատասխանում է. «Էշը Ղարաբաղի բազմաթիվ խորհրդանիշերից մեկն է: Այն խաղաղ կենդանի է, վնասատու չէ, բայց համառ է: Եթե մի բան չի կամենում, որեւէ մեկը չի էլ կարող պարտադրել: Մի ուրիշ խորհրդանիշ էլ Ստեփանակերտի մուտքը զարդարող Պապիկ-տատիկի հուշարձանն է, որ ցույց է տալիս մեծերի հանդեպ մեր խոր հարգանքը»: Արզումանյանը պատմում է, թե իրենք շատ պատմություններ են հավաքել, մի քանիսը լսել է իր պապ ու տատից, մյուսները՝ Ղարաբաղում ապրող իր ընկերներն են փոխանցել: Գրքում շատ են ասացվածքները: Արզումանյանը մեկնաբանում է, թե ինչու է ներկայացվածների մեջ ամենաշատը սիրում «Օգնիր ուրիշներին, որ նրանք էլ քեզ օգնեն» տարբերակը: «Եթե մարդիկ իրար չօգնեն, կարգին մարդ չեն լինի, ասում է նա հիշատակելով՝ ադրբեջանցիների ու հայերի միջեւ պատերազմը: Մի ոռոգում ընկերները հանկարծ թշնամի էին դառնում, իսկ միակ մեղքը այլ ազգի պատկանելն էր: Կարեւոր է ըմբռնել, թե ընկերն ազգություն չի ճանաչում: Ով սա հասկանա, քարոզչության ծուղակն ընկնելու փոխարեն ընկերներին կօգնի»: «Նախ զոհանչին տես, հետո հարսնացու ընտրիր» ղարաբաղյան մեկ ուրիշ իմաստնություն մեջբերելով թերթը հետաքրքրվում է՝ հեղինակն այդպե՞ս է վարվել: «Կինս գերմանուհի է, զոհանչիս հետ ուշ եմ ծանոթացել» ծիծաղում է Արզումանյանը, «բայց գոհ եմ ու շատ եմ հարգում նրան»: Արմեն Արզումանյանը Ղարաբաղի մասին պատմող գրքից առաջ հրատարակել է «Օգնեցե՛ք, հաճախորդները գալիս են» գիրքը, եւ ինքնիրեն խոստացել է՝ տարեկան մի գիրք գրել: «Ուզում եմ մարդկանց ինչ-որ բան պատմել: Միգուցե աշխարհն իմ աշխատանքի միջոցով մի քիչ ավելի լավը դառնա: Երբ մարդիկ ժպտում են, ուրեմն ինչ-որ բանի հասել ես»: Իսկ լեզվական դժվարությունն՞ը: «Գերմանիան այլեւս օտար չէ, իմ երկիրն է: Երբ 20 տարի առաջ եկա, ոչ մի բառ չգիտեի, իսկ հիմա հաճույք է պատճառում, որ զգացմունքներս կարողանում եմ ձեւակերպել, միաժամանակ հայտնագործում եմ լեզվի գեղեցկությունը»:

Հեղինակների մասին-Ղարիբ Բաբայանը ծնվել է 1955-ին Արցախում: Ավարտել է Դոնի Ռոստովի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի համալսարանի պրոռեկտորն է, պրոֆեսոր: 50-ից ավելի գիտական հոդվածների, փիլիսոփայության, միջազգային իրավունքի ուսումնական ձեռնարկների հեղինակ է:

Արմեն Արզումանյանը ծնվել է 1961-ին, Բաքվում: Ժուռնալիստիկա է ուսանել Դոնի Ռոստովի պետական համալսարանում: Ավարտելուց հետո աշխատել է Ռուսաստանի հարավում, տարբեր օրաթերթերում: 1993-ից բնակվում է Գերմանիայում: 2007-ին մասնակցել է երկրում առաջին անգամ անցկացված արձակի եւ հրապարակախոսության «Նոր նավահանգիստ» մրցույթին: Նրա՝ ռուս-գերմանական բարեկամության մասին պատմող «Իմ հարեւան Գեորգ տատիկը» պատմվածքն ընդգրկվել է «Նոր նավահանգիստ» անթոլոգիայում: 2011-ին լույս է տեսել նրա անդրանիկ ժողովածուն «Օգնեցե՛ք, հաճախորդները գալիս են. Ծիծաղաշարժ պատմություններ շինանյութի խանութում»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Դարչինյանը կրկին մարտահրավեր է նետել Դոներին

«Ապացուցիր, որ հավի ճուտ չես», հայտարարել է Վախթանգը

Ինչպես տեղեկացրել ենք, առաջին կիսաթեթեւաձային կարգում WBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, 30-ամյա ֆիլիպինցի Նոնիտո Դոներն իր տիտղոսի պաշտպանությունը կիրականացնի ապրիլի 13-ին ԱՄՆ-ում 32-ամյա կուբացի Գիլյերմո Ռիգոնդոյի հետ կայանալիք մենամարտում: Իսկ մինչ այդ ենթադրվում էր, որ Ռիգոնդոն կիրաժարվի մենամարտից եւ չեմպիոնական գոտին վիճարկելու իրավունք կստանա Վախթանգ Դարչինյանը: Հայ բռնցքամարտիկը բազմիցս հայտարարել էր, որ պատրաստ է Նոնիտո Դոների հետ մենամարտել այնտեղ, որտեղ որ կցանկանա ֆիլիպինցին:

Իր ուժերին մշտապես վստահ **Վախթանգ Դարչինյանը** հերթական անգամ մարտահրավեր է նետել Նոնիտո Դոներին՝ կարծիքն արտահայտելով վերջինիս մասին. «Նոնիտո Դոները ցույց տվեց, որ չի պատրաստվում ինձ ռեւանշի հասնելու հնարավորություն ընձեռել՝ նախընտրելով ապրիլի 13-ին մենամարտել Գիլյերմո Ռիգոնդոյի հետ: Ցեմ կարծում, թե այդ մենամարտը կկայանա: Ես վստահ հաղթանակ տոնեցի նախկինում պարտություն չկրած Լուիս դել Վալեի նկատմամբ եւ նույնը կանեմ Նոնիտո Դոների դեպքում: Ամբողջ աշխարհում իմ երկրպագուներն ինձ հարցնում եմ, թե ե՞րբ եմ նորից մենամարտելու Դոների հետ:

2007-ին Նոնիտոյի բախտը բերեց, բայց 2013-ին ամեն ինչ այլ կերպ կլինի: Թող ապացուցի, որ ինձանից չի վախենում: Նրա հետ մենամարտել եմ գրեթե 6 տարի առաջ: Այժմ ցանկանում եմ ռեւանշի իրավունք ստանալ, որպեսզի բոլորին ապացուցեմ, որ նրա բախտն իրոք բերել է: Երբ աշխարհի բացարձակ չեմպիոն դարձա, նրան հրավիրեցի մենամարտի: Սակայն նա հրաժարվեց՝ ասելով, թե ինձ արդեն հաղթել է ու կրկին մենամարտելու առիթ չի տեսնում: Մի՞թե աշխարհի չեմպիոնի տիտղոսի 3 գոտիները ծանրակշիռ պատճառ չէին ինձ հետ կրկին մենամարտելու համար: Պատճառն այն է, որ Դոները պարզապես վախենում է ինձնից: Նա պարզապես չի կողմնորոշվում, թե ումից է ավելի վախենում՝ ինձնի՞ց, թե՞ Ռիգոնդոյից: Մենամարտիր ինձ հետ ու ապացուցիր, որ հավի ճուտ չես: Ես առանց որեւէ խնդրի կանցնեմ դոպինգ ստուգումը»:

Հիշեցնենք, որ Վախթանգ Դարչինյանը վերջին անգամ ռինգ է դուրս եկել անցյալ տարվա սեպտեմբերի 29-ին՝ ԱՄՆ-ում կայացած 10-ռաունդանոց մենամարտում միավորներով հաղթելով Լուիս դել Վալեին: Նա պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 44 մենամարտերից շահել է 38-ը, մեկն ավարտել է ոչ-ոքի, կրել է 5 պարտություն: Նոնիտո Դոները պրոֆեսիոնալ ռինգում միայն մեկ պարտություն է կրել, մյուս 31 մենամարտերում հաղթել է:

Կկայանա՞ արդյոք երկար սպասված Դարչինյան-Դոներ մենամարտը, դժվար է գուշակել: Դոներն առայժմ զբաղված է Ռիգոնդոյի հետ մենամարտի նախապատրաստությամբ: Եթե ֆիլիպինցուն հաջողվի պահպանել աշխարհի չեմպիոնի տիտղոսը, բացառված չէ, որ նա վերջապես ընդունի Վախթանգի մարտահրավերը:

«Բարսելոնը» հայտնվեց դժվարին իրավիճակում

Իտալական «Միլանը» շաբաթի համար անսպասելի խոշոր անակնկալ մատուցեց՝ սեփական հարկի տակ 2-0 հաշվով պարտության մատնելով իսպանական «Բարսելոնին»: Վերջինս 2 գնդակի տարբերությամբ վերջին պարտությունը կրել էր 2011-ի հունվարին՝ Իսպանիայի գավաթի մրցաշարում զիջելով «Բենիտեսին» (1-3): Իսկ դրանից հետո կայացած 132 հանդիպումներում ոչ մեկին չէր հաջողվել «Բարսելոնին» հաղթել 2 գնդակի առավելությամբ:

Իտալացիները ոչ միայն կարողացան դիմագրավել «Բարսելոնին» եւ վնասազերծել իսպանացիների առաջատար Լիոնել Մեսիին, այլեւ 2 անգամ հաջողությամբ եզրափակեցին գրոհները: Հետաքրքրական է, որ իսպանական Marca-ի անցկացրած հարցման արդյունքներով Լիոնել Մեսին ճանաչվել է այդ հանդիպման վատագույն ֆուտբոլիստ՝ վատակելով ընդամենը մեկ միավոր: Այժմ պատասխան խաղից առաջ «Բարսելոնին» սեփական հարկի տակ չափազանց դժվարին մրցակցություն է սպասում քառորդ եզրափակիչի ուղեգրի համար պայքարում:

Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Մասիմիլիանո Ալեգրի («Միլան»)-Մենք հիանալի էինք պատրաստվում: Գիտեինք, որ «Բարսելոնը» սիրում է տիրել գնդակին, սակայն ինքնաբերաբար չէինք կորցնում: Առաջին խաղակեսում մի քանի գեղեցիկ հակագրոհներ կազմակերպեցինք, սակայն վերջին փոխանցումը չստացվեց: Իսկ ահա ընդմիջումից հետո դա մեզ հաջողվեց: Տղաները խաղադաշտում հիանալի գործեցին, վնասազերծեցին Մեսիին: Շատ գոհ եմ նրանց խաղից: Սակայն արդեն հարկ է մտածել պատասխան խաղի մասին, որը շատ ծանր է լինելու: Ուստի շատ եմ ափսոսում, որ չհաջողվեց 3-րդ գոլը խփել: Եթե ցանկանում ենք քառորդ եզրափակիչ մտնել, ապա Բարսելոնում էլ պետք է շատ հավաքված ու կազմակերպված գործենք:

Ժորդի Ռոուրա («Բարսելոնի» գլխավոր մարզչի օգնական)-Այսօր մենք մեր լավագույն խաղը չխաղացինք: Սակայն նույնիսկ այդ պարագայում գրանցված արդյունքը մեզ համար շատ վատ է: Մրցակիցը մի քանի հարմար պահ ստեղծեց ու իրացրեց՝ մեզ դժվարին խնդրի առջեւ կանգնեցնելով: «Միլանն» այսօր շատ լավ էր պատրաստվում: Իտալական թիմը շատ լավ կազմակերպված պատրաստություն ունի, որը ճեղքելը շատ դժվար է: Մրցակիցը մեծ ուժեր էր կենտրոնացրել թիկունքում, իսկ խփած առաջին գոլը մեզ թեթեւ շոկի մեջ գցեց: Սակայն ես հավատում եմ իմ սաներին: Պատասխան հանդիպումը լրիվ այլ կերպ կընթանա: Մեզանից ոչ մեկը չի կասկածում, որ կարող ենք փոխել մրցակցության ընթացքը:

Ստամբուլում «Գալաթասարայը» հյուրընկալել էր «Շալկե-04-ին»: Արդեն 12-րդ րոպեին Յիլմազը բացեց հաշիվը: Սակայն 3 րոպե անց հյուրերից Զոնսը վերականգնեց հավասարակշռությունը, որը չխախտվեց մինչեւ հանդիպման ավարտը:

Մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Ֆաթիհ Թերիմ («Գալաթասարայ»)-Մեզ հաջողվեց լավ խաղի շնորհիվ արագ գոլ խփել, սակայն կորցրինք սխալ թույլ տվեցինք ու պատասխան գնդակն ընդունեցինք: Ընդմիջումից հետո գերմանական ակումբը կարող էր հաշվի մեջ առաջ անցնել: Ընդհանուր առմամբ հավասար խաղ էր:

Ենս Կելլեր («Շալկե-04»)-Մենք հոյակապ ֆուտբոլ ցուցադրեցինք: Կազմակերպված էինք գործում պատշտանությունում: Մի քանի գոլային պահեր ստեղծեցինք, սակայն միայն մեկն իրացրինք: Մեր ֆուտբոլիստների համար նման հանդիպումները փորձ ձեռք բերելու տեսակետից շատ կարեւոր են: Ընդհանուր առմամբ գոհ եմ թիմի խաղից:

ՇԱԽՄԱՏ

Գրիգորյանն առաջին պարտությունը կրեց

Ֆրանսիական Ռոշֆոր քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրն անհաջող դասավորվեց միանձնյա առաջատար Կարեն Գրիգորյանի համար: Հայ շախմատիստը սեւերով զիջեց վրացի գրոսմայստեր Դավիթ Զոջուային՝ կրելով մրցաշարում առաջին պարտությունը: Զոջուան վաստակած 5,5 միավորով հավասարվեց Գրիգորյանին եւ նրա հետ գլխավորեց աղյուսակը:

Առայժմ անպարտելի է Սամվել Տեր-Սահակյանը, որը ոչ-ոքի ավարտեց պարտիան մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող Անդրեյ Իսրաստեսկուի հետ: Սամվելը վաստակել է 5 միավոր եւ նույնպիսի արդյունք ունեցող 5 շախմատիստների հետ հետապնդում է առաջատարներին:

Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր: 8-րդ տուրում Կարեն Գրիգորյանը սպիտակներով կխաղա Կորե Ակշայրաջի հետ: Սամվել Տեր-Սահակյանը սեւերով կմրցի Քուենտին Լուիսեայի հետ: Իսկ Դավիթ Զոջուայի մրցակիցը կլինի Անդրեյ Իսրաստեսկուն:

Բ խմբի մրցաշարում հերթական պարտությունը կրեց ֆրանսահայ Գուրգեն Հազարապետյանը, որի մրցակիցը Բերտրան Գրեմերսն էր: Հայ շախմատիստը 7 հնարավորից ընդամենը 2 միավոր է վաստակել: 6-ական միավորով աղյուսակը գլխավորում են Վինսենտ Սավրեն եւ Լուիզ Գոնսալեսը:

Հաղթական մեկնարկ

Դավիթ Նալբանդյանը հաղթանակով սկսեց Բուենոս Այրեսում մեկնարկած թենիսի մրցաշարը՝ 3 խաղափուլերում առավելության հասնելով իր հայրենակից Կառլոս Բեռլոկի նկատմամբ (6-3, 2-6, 6-3): 2-րդ փուլում Նալբանդյանը կմրցի իսպանացի Դավիթ Ֆեռերի հետ, որն առաջին փուլում պայքարից դուրս էր մղել արգենտինացի Ագուստին Վելոտիին (6-4, 6-1):

Դամե Դիոպը պայմանագիր կնքեց «Շիրակի» հետ

Անթալիայում մարզվող «Շիրակը» ստուգողական հերթական խաղն անցկացրեց Ղազախստանի «Օրդաբասի» թիմի հետ: Գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 2-2: Գյումրեցիներից առաջին գոլը 11 մ հարվածով խփեց թիմի փորձառու հարձակվող Անդրանիկ Բարիկյանը: 2-րդ գոլի հեղինակը սենեգալցի կիսապաշտպան Դամե Դիոպն էր: Ի դեպ, վերջինս 1,5 տարվա պայմանագիր է կնքել «Շիրակի» հետ:

Հիշեցնենք, որ Դամե Դիոպը անցած տարվա մարտից մինչեւ օգոստոս վարձավճարով հանդես եկավ «Շիրակում»: Նրա տրանսֆերային իրավունքները պատկանում էին «Խիմկիին»: Վարձավճարի ժամկետի ավարտից հետո պարզվեց, որ սենեգալցու տրանսֆերը գնել է ռուսական մեկ այլ ակումբ՝ «Ուրալը»:

Դամե Դիոպը «Շիրակի» պաշտոնական կայքին հայտնել է, որ «Ուրալում» նոր մարզիչն իրեն խաղալու հնարավորություն շատ քիչ էր ընձեռում, ուստի որոշեց խզել պայմանագիրն ակումբի հետ: Դիոպը հույս է հայտնել, որ «Շիրակի» հետ Հայաստանում մեծ հաջողությունների կհասնի:

Մխիթարյանի չկայացած հեթ-տրիկը

Դոնեցկի «Շախտյորն» Անթալիայում շարունակում է նախապատրաստվել Դորտմունդի «Բորուսիայի» հետ կայանալիք չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպմանը՝ ուժերը փորձելով ստուգողական խաղերում: Հերթական խաղում «Շախտյորի» մրցակիցը «Ցրվենա Զվեզդան» էր: Թեեւ ողջ հանդիպմանը մասնակցած Հենրիխ Մխիթարյանը 3 անգամ գրավեց մրցակցի դարպասը, սակայն խաղն ավարտվեց գոլազուրկ ոչ-ոքի, քանի որ մրցավարը բոլոր դեպքերում էլ «խաղից դուրս» վիճակ արձանագրեց: «Շախտյորը» կարող էր հաշիվը բացել 11 մ հարվածով, սակայն բրազիլացի Դուգլաս Կոստան դիպուկ չգտնվեց:

Անչելոտին հավանաբար գլխավորի «Ռեալը»

Ֆրանսիական լրատվամիջոցների տեղեկացմամբ, ՊՍԺ-ի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին մրցաշրջանի ավարտից հետո հավանաբար գլխավորի Մադրիդի «Ռեալը»: Կողմերի միջեւ արդեն բանավոր համաձայնություն է ձեռք բերվել: Ինչ վերաբերում է «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուին, որը մինչեւ 2016-ը պայմանագիր ունի կնքած արքայական ակումբի հետ, ապա նա կհեռանա թիմից: Մոուրինյուն արդեն պայմանավորվել է «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսի հետ պայմանագրի վաղաժամկետ լուծարման մասին: Նա 10 մլն եվրո փոխհատուցում կստանա:

Անտոնիո Կոնտեն լավագույնն է Իտալիայում

Թուրինի «Յուվենտուսի» գլխավոր մարզիչ Անտոնիո Կոնտեն «Ոսկե նստարան» մրցանակի է արժանացել: Այն հանձնվում է Իտալիայի առաջնության լավագույն մարզչին: Անցկացված քվեարկության արդյունքներով Անտոնիո Կոնտեն ճանաչվել է լավագույնը՝ առաջ անցնելով Վինչենցո Մոնտելայից եւ Ֆրանչեսկո Գվիդոլինից:

Անտոնիո Կոնտեի գլխավորությամբ «Յուվենտուսը» Իտալիայի 2011/12-ի առաջնությունում նվաճել էր չեմպիոնի տիտղոսը՝ մրցաշարում մնալով անպարտելի:

Դել Պիերոն երկարաձգեց պայմանագիրը

Իտալիայի հավաքականի եւ Թուրինի «Յուվենտուսի» նախկին հարձակվող Ալեսանդրո դել Պիերոն մեկ տարով երկարաձգել է պայմանագիրն ավստրալական «Սիդնեյի» հետ: 38-ամյա հարձակվողը «Սիդնեյում» բավականին արդյունավետ է գործում՝ 18 խաղում դառնալով 11 գոլի հեղինակ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հայտնի են դարձել Orange Գրքի մրցանակակիրների անունները

Փետրվարի 20-ի երեկոյան տեղի ունեցավ «Orange Գրքի մրցանակ 2012» գրքի մրցույթի մրցանակաբաշխության արարողությունը, որի ընթացքում ամփոփվեցին մրցույթի արդյունքները եւ հայտարարվեցին հաղթողների անունները:

Վեպ. «Մաշկացավ», Հովհաննես Թեքգյոզյան

Պատմվածք. «Համոյի սիրած ծաղիկը», Նարե Սահակյան

Հեքիաթ. «Ձերդ գերազանցություն վաս կախարդ պառավ», Երազիկ Գրիգորյան

Բանաստեղծական շարք. «Մոգ արքաներ», Շուշանիկ Թամրազյան

Յուրաքանչյուր ժանրում հաղթող ճանաչված ստեղծագործությունը կստացվի 500 տոմսանակով, իսկ հաղթող ստեղծագործությունների հեղինակները ստանում են նաեւ դրամական պարգեւ՝ 500.000 ՀՀ դրամ:

Մրցանակաբաշխության երեկոյի ժամանակ Orange-ի գլխավոր տնօրեն **Ֆրանսիս Ժելիբտերը** շնորհավորեց մրցանակակիրներին՝ մասնավորապես ասելով. «Այն մեծ խանդավառությունը, որ առաջացրեց Orange Գրքի մրցույթն այս տարի, մեզ ցույց է տալիս, որ ճիշտ ուղու վրա ենք. ժամանակակից գրականությունը Հայաստանում իսկապես պոտենցիալ ունի: Այս մրցույթը կոչված է ժամանակակից հայ գրողների՝ սկսնակ կամ անվանի, աջակցել հանրությանը ներկայացնել իրենց անտիպ ստեղծագործությունները, որոնցից լավագույնները գիրք կդառնան»:

Orange Գրքի մրցանակ-2013-ը անցկացվել է երկու փուլով: Առաջին փուլում ժյուրիի անդամներն ընտրել են առավելագույնը երեք ստեղծագործություն յուրաքանչյուր ժանրում, որոնք հրապարակվել են Orange-ի պաշտոնական էջում եւ հանձնվել ընթերցողների լայն շրջանակների դատին: Բոլոր ընթերցողները մեկ ամիս շարունակ՝ հունվարի 15-ից փետրվարի 15-ը, հնարավորություն են ունեցել քվեարկելու իրենց նախընտրած ստեղծագործությունների օգտին Facebook սոցիալական ցանցի միջոցով: Փետրվարի 15-ի կեսօրին առցանց քվեարկությունն ավարտվեց ու գրանցվեցին վերջնական արդյունքները: Ըստ այդմ, բոլոր ստեղծագործությունները միասին հավաքել են 7580 քվե, իսկ ամենաշատ քվե հավաքած եռյակում են հայտնվել Երազիկ Գրիգորյանի «Ձերդ գերազանցություն վաս կախարդ պառավ», Էլֆիք Զոհրաբյանի «Նարցիսը» եւ Կարեն Անտաշյանի «Ռեքվիեմ» ստեղծագործությունները: Առցանց քվեարկության արդյունքներով է որոշվել «Ժողովրդական ընտրություն» մրցանակի արժանացած ստեղծագործությունը, որը «Ձերդ գերազանցություն վաս կախարդ պառավ» հեքիաթն է 2253 քվեով:

Բոլոր ժանրերում հաղթող ստեղծագործություններն ընտրվել են ժյուրիի քվեարկությամբ, ընդ որում առցանց քվեարկության արդյունքները հաշվվել են որպես ժյուրիի մեկ անդամի ձայն:

Հիշեցնենք, որ Orange Գրքի մրցանակ 2012-ի համար ընդհանուր թվով ներկայացվել է 470 մասնակցության հայտ, որոնցից 155-ը՝ պատմվածքի ժանրում, 236-ը՝ պոեզիայի, 39՝ վեպ/վիպակի, իսկ 40-ը՝ հեքիաթի ժանրում: Մրցույթն անցկացվում է արդեն երկրորդ անգամ: Նախորդ տարի մրցույթին մասնակցում էր 130 ստեղծագործություն:

Այս տարի մրցույթին կարող էին մասնակցել նրանք, ովքեր ստեղծագործում են հայերենով (արեւելահայերեն կամ արեւմտահայերեն) եւ ներկայացրել են նախկինում չհրատարակված գրական երկ: Այս տարի առաջին անգամ Orange Գրքի մրցանակին մասնակցեցին նաեւ Սփյուռքի՝ հայերեն լեզվով ստեղծագործողներ:

Մրցույթի նպատակն է խթանել հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, բացահայտել ժամանակակից հայ գրողներին, օրեցօր զարգացող էլեկտրոնային մեդիայի միջոցով տարածել նրանց ստեղծագործությունները ընթերցողների առավել լայն զանգվածներին: Այս նախաձեռնությամբ Orange-ը նաեւ Երեւանի հետ միասին տոնում է գրքի եւ ընթերցանության տոնը, քանի որ մինչեւ 2013թ. ապրիլ Երեւանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հայտարարվել է գրքի համաշխարհային մայրաքաղաք:

Orange գրքի մրցանակը կազմակերպվում եւ իրականացվում է «Հայ գրքի կենտրոն» հասարակական կազմակերպության հետ:

ACBA-CREDIT AGRICOLE BANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Մարտունի» մասնաճյուղին պատկանող ՎԱԶ-21214 մակնիշի, 2004թ. արտադրության ավտոմեքենա: Ցանկացողները կարող են դիմել «Մարտունի» մասնաճյուղ՝ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի Երևանյան 52 կամ զանգահարել (094) 05 33 06 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

h/h	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Գույքի օգտագործման նպատակը	Հողամասի մակերեսը /քմ/	Շինության մակերեսը /քմ/	Մեկնարկային գինը /դրամ/
1	Ռաֆֆու 93/4	Կաթսայատուն	381.25	339.25	7,200,000
2	Արտաքիսյան թ., 3 նրբ. 26/2	Կաթսայատուն	141.75	117.06	3,370,000
3	Շերամի 23/4	Կաթսայատուն	318.72	292.82	15,900,000
4	Մարգարյան 10/6	Կաթսայատուն	182.52	154.15	4,500,000
5	Զավարյան 29ա 25	ոչ բնակելի տարածք		39.1	3,200,000

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ փետրվարի 11-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ փետրվարի 11-ը, ժամը 14.00-ն:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ

9,1 տոկոս տնտեսական ակտիվության աճը հունվարին

Արդյունաբերության ծավալներն աճել են 18,8 տոկոսով

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը հրապարակած 2013-ի առաջին՝ հունվար ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 9,1 տոկոս: Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում 2013-ի հունվարին 2012-ի հունվարի նկատմամբ աճ է արձանագրվել, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ անկում: Ինչը բնական է, քանի որ դեկտեմբերին տնտեսական ակտիվությունը անհամեմատ բարձր է լինում, քան հունվարին, եւ այս երկու ամիսների համադրմամբ երբեք եզրակացություններ չեն արվում:

Ամենամեծ աճն արձանագրվել է արդյունաբերությունում՝ 18,8 տոկոս նախորդ տարվա հունվարի համեմատ եւ 21,1 տոկոսով նվազում՝ դեկտեմբերի նկատմամբ: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 6 տոկոսով, դեկտեմբերի նկատմամբ նվազել 0,7 տոկոսով: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա հունվարի նկատմամբ 7,5 տոկոս աճ է արձանագրվել, իսկ դեկտեմբերի նկատմամբ՝ 20 տոկոս անկում: Մանրածախ առեւտրում 2013-ի հունվարին 2012-ի հունվարի նկատմամբ արձանագրվել է 5,7 տոկոս աճ, իսկ դեկտեմբերի նկատմամբ՝ 67,7 տոկոս անկում: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը աճել է 2,1 տոկոսով, իսկ դեկտեմբերի նկատմամբ նվազել 67,7 տոկոսով: Միայն շինարարությունն է, որ հունվարին անկում է արձանագրել 2012-ի հունվարի նկատմամբ՝ 17,6 տոկոսով, իսկ դեկտեմբերի նկատմամբ անկումը կազմել է 91,9 տոկոս:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2013-ի հունվարին 2012-ի հունվարի նկատմամբ ավելացել է 21,7 տոկոսով եւ կազմել 422,5 մլն դոլար, իսկ դեկտեմբերի նկատմամբ նվազել 25,1 տոկոսով: Արտահանումը կազմել է 112,4 մլն դոլար, արձանագրելով կտրուկ՝ 54,6 տոկոս աճ, իսկ 2011-ի դեկտեմբերի նկատմամբ՝ 17,3 տոկոսով նվազում: Ներմուծումը կազմել է 310,2 մլն դոլար՝ աճելով 13 տոկոսով, իսկ 2011-ի դեկտեմբերի նկատմամբ նվազելով 27,6 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 197,8 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվարին կազմել է մոտ 140 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 168 հազար դրամ, պետականում՝ 112 հազար դրամ:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Աջակցություն սիրիահայությանը հեռուստամարաթոն-2012-ի շրջանակներում

«Հայաստան» համահայկական հիմնադրամը հեռուստամարաթոն-2012-ի շրջանակներում հավաքագրած միջոցներից նոր գումարներ է նպատակաուղղում սիրիահայության աջակցության ծրագրերին:

Ի հավելումն Հալեպի հայկական դպրոցների ուսուցիչների աշխատավարձերի վճարման արդեն իսկ ուղղված միջոցների (100.000 ԱՄՆ դոլար Լիբանանի ռադիոթոն) եւ (50.000 եվրո Ֆրանսիայի հեռախոսամարաթոն), առաջիկա երեք ամիսների ընթացքում հիմնադրամը Մեծի տանն Կիլիկիո առաջնորդարանի միջոցով երկու փուլով եւս 200.000 ԱՄՆ դոլար կուղղի մեր սիրիահայ հայրենակիցների խնդիրների լուծմանը:

Ինչ վերաբերում է հայաստանյան երկու տասնյակից ավելի բուհերում սովորող սիրիահայ ուսանողների ուսման տարեկան վարձավճարների փոխհատուցմանը, որն իրականացվում է սփյուռքի նախարարության տրամադրած ուսանողների ցանկի եւ ուսումնական հաստատություններից ստացված տեղեկանքների հիման վրա, եւս 10 միլիոն 800 հազար ՀՀ դրամ կհատկացվի ծրագրին: Նախորդ ամիսների ընթացքում այս նպատակով ծախսվել է 17 միլիոն 177 հազար ՀՀ դրամ, ծրագիրն ունեցել է 69 շահառու:

«Հայաստան» համահայկական հիմնադրամ

Տաք հագուստ՝ սիրիահայերին

Հայաստանում ապաստանած սիրիահայերի օգնության տարբերույթ ծրագրերը շարունակվում են: Հայաստանի կառավարության, ՀՀ սփյուռքի նախարարության «Սիրիահայերի հիմնախնդիրների համակարգման կենտրոն» հասարակական կազմակերպության, ՀԲԸՄ-ի, Հայց. առաքելական եկեղեցու, հասարակական եւ բարեսիրական այլ կազմակերպությունների միջոցով ցուցաբերվող օգնությանը ավելացավ տաք հագուստի տրամադրման ծրագիրը:

Գերմանահայ գործարար Սուրեն Օհանյանի նվիրատվությամբ, ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչությունը «Սիրիահայերի հիմնախնդիրների համակարգման կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրել է մեծ քանակությամբ ձմեռային տաք հագուստ բոլոր տարիքային խմբերի համար նախատեսված: Հագուստի բաշխումը մեկնարկել է ՀԲԸՄ-Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Նոր Նորքի Հայորդյաց տանը: ՀԲԸՄ սիրիահայերի օգնության օժանդակ հանձնախմբի անդամները, ՀԲԸՄ կամավորներն ու «Սիրիահայերի հիմնախնդիրների համակարգման կենտրոն» հասարակական կազմակերպության աշխատակիցները երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 11-16-ը կընդունեն կարիքավոր սիրիահայերին ու նրանց կտրամադրեն հագուստը:

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 21.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: